Ճանաչի՛ր ինքդ քեզ

# կրթություն

Շաբաթաթերթ «Krtutiun» (education) weekly «Кртутюн» (образование) еженедельник 10.11.2021թ. չորեքշաբթի թիվ 46 (1019)

## Օլիմպիադա

Լույս իջնի հոգուդ, **Վահրամ Զազյան**, մաթեմատիկայի մեր մեծ ուսուցիչ... Այս նախադասությունը միաբերան կարող են արտաբերել Քո բոլո՛ր աշակերտները, եւ հատկապես նրանք, ովքեր Քո արտադասարանական *«Ոսկե գրքույկ»* ակումբի անդամ են եղել, հիացել *«մաթեմատիկայի սիմֆոնիայով»*, ապացուցել, որ երկու անգամ երկուսը հավասար է... հինգի... ովքեր անգիր գիտեին միջին դասարանների բոլոր խնդրագրքերի բոլոր խնդիրները՝ իրենց լուծումներով, լուծման տարբերակներով... Հապա օլիմպիադանե՛րը... Հավատացե՛ք, դրանք իրոք ցանկալի տոներ էին մեզ համար: Վերհիշեմ մի դրվագ: Հարեվան դպրոցում մաթեմատիկայի առարկայական օլիմպիադայի քաղաքային փուլն էր: Հանձնաժողովի նախագահը երջանկահիշատակ **Սամսոն Դաղբաշյանն** էր, ով այդ օրը պարզապես ապշեց զազյանականներիս իմացությամբ... Առավոտյան, երբ վիճակագրությամբ պարզվեց, թե որ առաջադրանքներն են տրվելու օլիմպիադայի մասնակիցներին, մեծարգո Դաղբաշյանը պատվիրեց հանձնաժողովի անդամներից մեկին՝ գրադարանից բերել տվյալ խնդրագրքերը: Մինչ գրքերը տեղ կհասնեին, լեգենդար դասարանի երկու աշակերտներս նայեցինք միմյանց, ապա առանց մի որեւէ խոսքի՝ մոտեցանք գրատախտակին, կավիճով այն բաժանեցինք երկու մասի եւ սկսեցինք գրել երկու տարբերակների բոլոր առաջադրանքների տեքստերը ճիշտ այնպես, ինչպես կային խնդրագրքերում. դասագրքերի կարիքն այլեւս չզգացվեց... Ավելորդ է նշել, որ այդ առաջադրանքների հնարավոր բոլոր լուծումները եւս գիտեինք վաղուց եւ մեզ համար դժվար չէր մի քանի րոպեից հանձնաժողովին հանձնել անթերի աշխատանքների երկու տետր... Դրանից հետո, ավա՜ղ, ես չեմ հիշում նման մի դեպք իմ երեխաների դպրոցական առօրյայից: Ճիշտ է, օլիմպիադաները միմյանց հաջորդում են պարբերաբար, եւ, թվում է, դարձել են սովորական իրադարձություններ, սակայն ազնիվ մրցակցության ոգին եւ պատանեկան ինքնադրսեւորման բնական մղումները միշտ էլ ենթակա են մեծ խանդավառության. միայն թե մեծերս կարողանանք դա գնահատել եւ արթնացնել:

Չմոռանանք. օլիպիադաները վաղուց փորձարկված եւ անչափ հետաքրքրական գործընթացներ են մասնակից բոլոր աշակերտների համար: Չզլանանք, ոգեւորվենք եւ ոգեւորենք մերոնց: Թող նրանց պատանեկան խանդավառությունը վերածվի գիտելիքի հանդեպ տենչի: Իսկ գիտելիքը մեզ պետք է հանապազօրյա հացի պես: Իմացությունն է կերտում ապագան: ***(տե՛ս՝ նաեւ էջ 2)***

***Գ. Մ.***



### Կառավարություն

## Հայաստանը՝ ԵՄ *«Հորիզոն Եվրոպա»* ծրագրի ասոցացված անդամ



Կառավարության՝ նոյեմբերի 4-ին կայացած նիստում հաստատվել է *«Հայաստանի Հանրապետության եւ Եվրոպական միության միջեւ «Հորիզոն Եվրոպա» հետազոտությունների եւ նորարարության շրջանակային ծրագրին Հայաստանի Հանրապետության մասնակցության մասին»* համաձայնագիրը ստորագրելու Կրթության, գիտության, մշակույթի եւ սպորտի նախարարության առաջարկությունը: Ծրագիրը նախատեսված է 2021-27 թվականների համար:

ԿԳՄՍ նախարար **Վահրամ Դումանյանը** զեկուցել է, որ համաձայնագրի ստորագրմամբ Հայաստանի գիտնականներն ու գիտական խմբերը համաշխարհային մակարդակի եւ նշանակության գիտական հետազոտությունների անմիջական մասնակիցը դառնալու հնարավորություն են ստանում:

***շարունակությունը՝ էջ 2***

### Աշխարհի հետ

## Համագործակցության ամրապնդում ակադեմիաների միջեւ



ՀՀ գիտությունների ազգային ակադեմիայում տեղի է ունեցել նախագահության ընդլայնված նիստ՝ Ռուսաստանի գիտությունների ակադեմիայի պատվիրակության մասնակցությամբ: Ներկա էին ՀՀ կրթության, գիտության, մշակույթի եւ սպորտի նախարար **Վահրամ Դումանյանը,** Բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարար **Վահագն Խաչատրյանը,** Գիտության կոմիտեի նախագահ **Սարգիս Հայոցյանը,** ՀՀ-ում ՌԴ արտակարգ եւ լիազոր դեսպան **Սերգեյ Կոպիրկինը,** ինչպես նաեւ ՀՀ ԳԱԱ եւ ՌԳԱ ներկայացուցիչներ:

Նիստի ընթացքում ստորագրվել է ՀՀ գիտությունների ազգային ակադեմիայի եւ Ռուսաստանի գիտությունների ակադեմիայի միջեւ գիտական համագործակցության միջոցառումների ծրագիրը: Գիտական համագործակցության ճանապարհային քարտեզը ստորագրել են ՀՀ ԳԱԱ նախագահ, ակադեմիկոս **Աշոտ Սաղյանը** եւ ՌԳԱ նախագահ, ակադեմիկոս **Ալեքսանդր Սերգեեւը:**

***շարունակությունը՝ էջ 2***

### Համակարգ

## 2022 թվականի երիտասարդական մայրաքաղաքը Հրազդանն է



ՀՀ ԿԳՄՍ նախարարությունը հայտարարել է ՀՀ 2022 թվականի երիտասարդական մայրաքաղաքը: Հայտերի գնահատման ամփոփիչ փուլի ընթացքում փորձագիտական գնահատման եւ կարճ հաղորդագրությամբ (SMS) քվեարկության արդյունքում *«Հայաստանի Հանրապետության 2022 թվականի երիտասարդական մայրաքաղաք»* մրցույթի կազմկոմիտեն երիտասարդական մայրաքաղաք է հռչակվել Հրազդանը, որը հավաքել է առավելագույն միավորներ: Մրցույթի համար հայտ էին ներկայացրել Ալավերդին, Արմավիրը, Եղեգնաձորը եւ Հրազդանը:

Կազմկոմիտեի նախագահ, ԿԳՄՍ նախարարի տեղակալ **Արթուր Մարտիրոսյանը** շնորհակալություն է հայտնել կազմկոմիտեի անդամներին, փորձագետներին եւ քաղաքների աշխատակազմերի ներկայացուցիչներին՝ կատարած իսկական աշխատանքի համար:

***շարունակությունը՝ էջ 6***

# Հայաստանը՝ ԵՄ «Հորիզոն Եվրոպա» ծրագրի ասոցացված անդամ

*սկիզբը՝ էջ 1*

*«Այսինքն՝ մեր գիտնականների հետազոտական հայտերը կֆինանսավորվեն ԵՄ կողմից, ավելին, նրանց հասանելի կլինեն ԵՄ երկրների գիտական ենթակառուցվածքները, ինչը շատ կարեւոր է գիտության զարգացման տեսանկյունից: Հնարավորություններ են նախատեսված՝ բարձր տեխնոլոգիական ոլորտի ստարտափերի, փոքր ու միջին ձեռնարկությունների աջակցության համար: Մասնակցությունը «Հորիզոն Եվրոպա» ծրագրին կապահովի եվրոպական գիտական տարածքում Հայաստանի ինտեգրման շարունականությունը»*,- նշել է նախարարը՝ տեղեկացնելով, որ գործընթացը սկսվել է դեռեւս 2016 թվականից՝ *«Հորիզոն 2020»* շրջանակային ծրագրին ՀՀ մասնակցությամբ: *«Հորիզոն Եվրոպա»* ծրագիրը համարվում է *«Հորիզոն 2020»* շրջանակային ծրագրի շարունակությունը: Ասոցացված անդամի կարգավիճակը հնարավորություն կտա Հայաստանից ներկայացված եւ ընդունված հայտերի համար ակնկալելու գիտական դրամաշնորհների տրամադրում:

Նախարար Վահրամ Դումանյանի խոսքով՝ նախատեսվում են մի շարք թիրախային միջոցառումներ, որոնք կնպաստեն ԵՄ հիշյալ ծրագրին Հայաստանի գիտական հանրույթի մասնակցության ընդլայնմանը:

*«Մասնավորապես՝ նախատեսում ենք գիտական հանրության իրազեկվածության բարձրացում, հայտերի լրացման խորհրդատվություն եւ տեխնիկական աջակցություն, ազգային մակարդակում «Հորիզոն Եվրոպա» ծրագրի կոորդինացնող եւ կոնտակտային անձանց ինստիտուտի ակտիվացում եւ այլն»*,- նշել է նա՝ հույս հայտնելով, որ նշված միջոցառումները կնպաստեն, որ ՀՀ գիտնականներն ու գիտական խմբերը ծրագրին մասնակցեն ավելի բարձր որակական չափանիշների բավարարող հայտերով:

Վահրամ Դումանյանը տեղեկացրել է նաեւ, որ ԵՄ *«Հորիզոն Եվրոպա»* շրջանակային ծրագրին մասնակցելու ֆինանսական պարտավորությունները իրականացվելու են ՀՀ պետական բյուջեով գիտության ոլորտին հատկացվող ամենամյա միջոցների հաշվին: Կախված մեր գիտնականների ակտիվությունից՝ անդամության վճարի մի մասը՝ մինչեւ 50 տոկոսը, կարող է վերադարձվել:

Վարչապետ Նիկոլ Փաշինյանը շեշտել է, որ գիտության ոլորտի զարգացումը Կառավարության առաջնահերթություններից է. 2022 թվականի պետական բյուջեի նախագծով՝ գիտության ոլորտի հատկացումներն ավելացվել են 83 տոկոսով, իսկ թեմատիկ հետազոտությունների ֆինանսավորման ծավալն ավելացվելու է 2,5 անգամ՝ կազմելով 6,7 մլրդ դրամ: Գիտությանը, մասնավորապես կիրառական գիտության ծրագրերին ուղղված պետական հատկացումներ են նախատեսված նաեւ այլ պետական գերատեսչությունների, օրինակ՝ Բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարության պետական ֆինանսավորման շրջանակում:

***Կ. ՄԱՆՈՒԿՅԱՆ***

# Համագործակցության ամրապնդում ակադեմիաների միջեւ

*սկիզբը՝ էջ 1*

ՀՀ ԳԱԱ նախագահության որոշմամբ՝ ՌԳԱ նախագահ, ակադեմիկոս Ալեքսանդր Սերգեեւին շնորհվել է ՀՀ ԳԱԱ պատվավոր անդամի կոչում:

ՀՀ ԳԱԱ նախագահ, ակադեմիկոս Աշոտ Սաղյանն իր ելույթում նշեց, որ ճանապարհային քարտեզը ենթադրում է համատեղ հետազոտությունների շարունակություն եւ համագործակցություն Հայաստանի եւ Ռուսաստանի համար արդիական եւ առաջնահերթ ուղղություններով:

*«Հայաստանի գիտությունների ազգային ակադեմիայի համար մեծ նշանակություն ունի Ռուսաստանի գիտությունների ակադեմիայի հետ համագործակցությունը, հատկապես, որ մեր ակադեմիաները, մեր գիտնականները պատմականորեն կապված են իրար հետ: Կարեւոր է, որպեսզի մեր համագործակցությունը տեղափոխենք նոր, ավելի բարձր մակարդակի վրա: Ես վստահ եմ, որ մեր համագործակցությունը բավականին հագեցած եւ գիտականորեն արդյունավետ կլինի, եւ մեր ինստիտուտների պատասխանատու մոտեցման, կառավարությունների աջակցության շնորհիվ կհասնենք լուրջ հաջողությունների, որը մեծ դեր կխաղա մեր երկրների տնտեսության զարգացման համար»*, - նշել է ակադեմիկոս Աշոտ Սաղյանը:

Իր ելույթում ՌԳԱ նախագահ, ակադեմիկոս Ալեքսանդր Սերգեեւը նշել է. *«Մենք ունենք շատ ընդհանուր խնդիրներ: Չնայած նրան, որ մեր երկրները տարբեր են ֆորմատով եւ քաղաքական կառուցվածքով, մեր գիտնականները պետք է միավորվեն: Մենք ունենք բավականին լավ ներուժ՝ իրար հետ աշխատելու եւ օգնելու համար: Ճանապարհային քարտեզը հստակ ցույց է տալիս այն կարեւոր ուղղությունները՝ հիմնարար եւ կիրառական, որոնք արդյունավետ են մեր պետությունների շահերի համարե:*

Ճանապարհային քարտեզում նշված համատեղ հետազոտությունները ներառում են ֆիզիկայի, մաթեմատիկայի, ինֆորմատիկայի, նանոտեխնոլոգիաների, կենսաբանական գիտությունների եւ կենսատեխնոլոգիայի, քիմիայի եւ նյութերի մասին գիտության, պատմաբանասիրական, բժշկական, գյուղատնտեսական հետազոտությունների, էներգետիկայի, մեխանիկայի ոլորտները: Ճանապարհային քարտեզում նշված են 54 համատեղ հետազոտություններ եւ նախագծեր:



Ողջույնի խոսքում ՀՀ ԿԳՄՍ նախարար Վահրամ Դումանյանն անդրադարձել է հայռուսական երկկողմ գիտական հետաքրքրություններին՝ նշելով, որ խորհրդային գիտական դպրոցը, որից սերում են ինչպես Ռուսաստանի, այնպես էլ Հայաստանի գիտությունների ակադեմիաները, եղել է հզոր եւ հայտնի դարբնոց:

*«Մենք հպարտությամբ ենք արձանագրում, որ եղել ենք այդ հզոր գիտական համակարգի մասը: Խորհրդային գիտական դպրոցով անցած շատ գիտնականներ այսօր էլ Հայաստանում շարունակում են արդյունավետորեն աշխատել՝ իրենց նպաստը բերելով ոլորտի զարգացմանը: Սակայն այսօր մենք ապրում ենք բոլորովին այլ իրականության մեջ. փոխվել է կյանքը, փոխվել են կրթության եւ գիտության համակարգերը: Խորհրդային ժամանակների անվճար բարձրագույն կրթության համակարգն այլեւս չկա, իսկ գիտությունը, լինելով բարձրագույն կրթության ածանցյալն ու շարունակությունը, մեր առջեւ դնում է նոր մարտահրավերներ:*

*Հայաստանի եւ Ռուսաստանի գիտական համակարգերի առջեւ ծառացած խնդիրների մեջ այսօր էլ կան մի շարք համընկնումներ, որոնք անհրաժեշտություն են դարձնում ուժերի միավորումը: Մենք այսօր երիտասարդների համար գիտությունը հրապուրիչ դարձնելու խնդիր ունենք: Կարծում եմ, որ այդ խնդիրը Ռուսաստանում էլ կա: Մենք ունենք շատ տաղանդավոր երիտասարդներ, որոնք հետագայում գերադասում են աշխատել Հայաստանից դուրս, որովհետեւ դրսում նրանք ավելի եկամտաբեր աշխատանք են գտնում:*

*Գիտության ոլորտի զարգացումը ՀՀ կառավարության առաջնահերթ խնդիրներից է: Մենք հաջորդ տարվա պետական բյուջեի նախագծում գիտության ոլորտի պետական ֆինանսավորման կտրուկ աճ ենք նախատեսել: Ամրագրել ենք նաեւ գիտական արդյունքի չափելիության որոշակի պահանջներ, եւ այդ ուղղությամբ արված քայլերը գիտական հանրության կողմից դրական արձագանքի են արժանացել»*,- նշել է Վահրամ Դումանյանը:

Նրա խոսքով՝ գիտության հանդեպ հետաքրքրությունը մեծացնելու պետական քաղաքականությունը լինելու է շարունական: Այս համատեքստում նախարարը կարեւորել է գիտության հանրահռչակումը՝ նշելով, որ սերը գիտության հանդեպ ձեւավորվում է դպրոցից:

ԳԱԱ ընդլայնված նիստում ողջույնի խոսքով հանդես են եկել նաեւ ՀՀ-ում ՌԴ արտակարգ եւ լիազոր դեսպան Ս. Կոպիրկինը, ՀՀ ԲՏԱ նախարար Վ. Խաչատուրյանը:

Նշենք, որ Ռուսաստանի գիտությունների ակադեմիայի պատվիրակության ընդունել է նաեւ ՀՀ վարչապետ Նիկոլ Փաշինյանը:

Տեղի է ունեցել նաեւ հանդիպում Ն.Ս.Օ.Ս.Ս. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսի հետ: Պատվիրակությունն այցելել է նաեւ Մատենադարան՝ Մեսրոպ Մաշտոցի անվան հին ձեռագրերի գիտահետազոտական ինստիտուտ, Հայոց ցեղասպանության թանգարան-ինստիտուտ:

***Կարինե ՄԱՆՈՒԿՅԱՆ***

Համակարգ

# Պետք է խրախուսել օլիմպիական խմբակների գործունեությունը

ՀՀ կրթության, գիտության, մշակույթի եւ սպորտի նախարար **Վահրամ Դումանյանը** հանդիպել է դպրոցականների 2021-2022 ուսումնական տարվա առարկայական օլիմպիադաների հանրապետական հանձնաժողովների նախագահների հետ:

Հանդիպմանը մասնակցել է նաեւ նախարարի տեղակալ **Ժաննա Անդրեասյանը:**

Ողջունելով ներկաներին՝ նախարար Վահրամ Դումանյանը նշել է, որ ՀՀ դպրոցականներն ավանդաբար լավ արդյունքներ են գրանցում միջազգային օլիմպիադաներում, սակայն ըստ վիճակագրության՝ այդ օլիմպիադաներին, հատկապես բնագիտական եւ ճշգրիտ գիտությունների գծով, գրեթե միշտ մասնակցում են նույն դպրոցների աշակերտները: Նախարարն ընդգծել է, որ պետք է անել հնարավորը՝ մեծացնելու տարբեր դպրոցների երեխաների ընդգրկվածությունն օլիմպիական գործընթացում: Այդ նպատակով Վահրամ Դումանյանն առաջարկել է խրախուսել դպրոցներում օլիմպիական խմբակների կազմակերպումը:



*«Դպրոցները պետք է հավուր պատշաճի իրենց աշակերտներին տեղեկացնեն օլիմպիադաների անցկացման եւ մասնակցության մասին, ինչպես նաեւ դպրոցներում ձեւավորեն օլիմպիական մթնոլորտ»*,- շեշտել է նախարարը:

ԿԳՄՍ նախարարի տեղակալ Ժաննա Անդրեասյանն իր հերթին նշել է, որ պայմանավորված Քովիդ-19 համավարակով՝ այս տարի եւս առաջնահերթություն է օլիմպիադաների անցկացման ընթացքում խստորեն պահպանել հակահամաճարակային կանոնները:

Ներկաները քննարկել են հատկապես դպրոցական փուլում գնահատման օբյեկտիվության խնդիրը: Գնահատման գործընթացը բարելավելու նպատակով ոլորտի պատասխանատուներն առաջարկել են ներկայացնել համապատասխան առաջարկներ:

Հանդիպման օրակարգի հաջորդ հարցը վերաբերել է 2022 թ. Հայաստանում անցկացվելիք կենսաբանության միջազգային օլիմպիադային: Նշվել է, որ վերջերս հանդիպում է տեղի ունեցել կազմկոմիտեի անդամների հետ, եւ պետք է հնարավորինս աջակցել կազմկոմիտեին՝ կենսաբանության միջազգային օլիմպիադան մեր երկրում բարձր մակարդակով անցկացնելու համար: Նախարարի տեղակալ Ժաննա Անդրեասյանը ներկաներին տեղեկացրել է, որ ՀՀ բյուջեից հատկացվել են համապատասխան միջոցներ՝ միջազգային այդ կարեւոր միջոցառումը պատշաճ կազմակերպելու համար:

***ՀԵղինե ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ***

Աշխարհի հետ

# Առկա է հարաբերությունների զարգացման ներուժ

ՀՀ կրթության, գիտության, մշակույթի եւ սպորտի նախարար **Վահրամ Դումանյանն** ընդունել է Հայաստանի Հանրապետությունում Էստոնիայի Հանրապետության արտակարգ եւ լիազոր դեսպան **Ռինա Կալյուրանդին** (նստավայրը՝ ք. Թբիլիսի): Հանդիպմանը ներկա են գտնվել նաեւ ԿԳՄՍ նախարարի տեղակալ **Արթուր Մարտիրոսյանը** եւ փոխդեսպան **Փիթեր Փալսը:**



Ողջունելով դեսպանին՝ նախարար Վահրամ Դումանյանը մեծապես կարեւորել է երկու բարեկամական երկրների համագործակցությունը եւ վստահություն հայտնել, որ կրթության, գիտության, մշակույթի, սպորտի եւ երիտասարդության բնագավառներում համատեղ ծրագրերի իրականացումը կնպաստի երկկողմ հարաբերությունների զարգացմանը եւ ընդլայնմանը: Նախարարի խոսքով՝ երկու երկրների միջեւ առկա է հարաբերությունների զարգացման մեծ ներուժ, որը դեռեւս ամբողջությամբ չի իրացվում, եւ անհրաժեշտ է ստեղծել համագործակցության իրական դաշտ՝ անցնելով կոնկրետ գործողությունների՝ հանդիպումներ, հուշագրերի ստորագրում եւ այլն:

Վահրամ Դումանյանը կարեւորել է համագործակցությունը գիտության ոլորտում՝ համատեղ ծրագրեր իրականացնելու, ինչպես նաեւ գիտության եւ գիտատեխնիկական ոլորտում հայ-էստոնական կապերը զարգացնելու նպատակով: Նախարարի խոսքով՝ այս ուղղությամբ ԿԳՄՍՆ գիտության կոմիտեն արդեն իսկ ձեռնարկել է առաջին քայլերը, մասնավորապես կապեր է հաստատել Էստոնիայի հետազոտությունների խորհրդի հետ՝ գիտության ոլորտի բարեփոխումների, գիտական կազմակերպությունների ֆինանսավորման մեխանիզմների արդյունավետության բարձրացման, գիտական նախագծերի փորձաքննության եւ մի շարք այլ ոլորտներում փորձի փոխանակման ծրագրեր իրականացնելու առաջարկությամբ:

ՀՀ-ում Էստոնիայի Հանրապետության արտակարգ եւ լիազոր դեսպան Ռինա Կալյուրանդն իր հերթին նշել է, որ կրթությունը նպատակային համագործակցության կարեւոր ուղղություններից է: Նա կարեւորել է եւ պատրաստակամություն հայտնել ընդլայնել համագործակցությունը բարձրագույն եւ հետբուհական կրթության ոլորտում՝ ընդգծելով, որ ներկայում Էստոնիայի բուհերում սովորում է ՀՀ 18 ուսանող: Դեսպանի խոսքով՝ Էստոնիայի հանրակրթական համակարգը Եվրոպայում լավագույններից է. այն երեխայակենտրոն եւ միջառարկայական մոդել է, որը թույլ է տալիս հետագա մասնագիտության վրա կենտրոնանալ դեռեւս հանրակրթության մակարդակում: Ռինա Կալյուրանդը տեղեկացրել է, որ էստոնական մոդելը, օրինակ, կիրառվում է Վրաստանի 15 դպրոցներում՝ այն հարմարեցնելով տեղական առանձնահատկություններին: Դեսպանը պատրաստակամություն է հայտնել դիտարկել էստոնական մոդելով ՀՀ մի քանի դպրոցներում փորձնական ծրագիր իրականացնելու հնարավորությունը:

*«ՀՀ կառավարությունը կարեւորում է հանրակրթության ոլորտի բարեփոխումները, եւ ներկայում Տավուշի մարզում փորձարկվում են դպրոցական առարկայական նոր չափորոշիչները: Քանի որ դրանք փորձնական փուլում են, հետեւաբար, պետք է դեռեւս կատարելագործվեն: Այդ պատճառով մենք դեռեւս ժամանակ ունենք քննարկելու եւ հասկանալու աշխարհի լավագույն փորձը: Վստահ եմ, որ Էստոնիայի փորձը միանշանակ օգտակար կլինի՝ Հայաստանում փորձարկվող չափորոշիչների հետ համադրելու, այն ինտեգրելու եւ վերջնական արդյունքը լավագույն մոդելի հիման վրա ձեւավորելու տեսանկյունից»*,- նշել է Վահրամ Դումանյանը:

Նախարարն անդրադարձել է նաեւ բարձրագույն կրթության ոլորտում համագործակցությանը: Նա նշել է, որ, օրինակ, Տարտուի համալսարանն աշխարհի առաջատար բուհերից է, եւ կարելի է քննարկել միջբուհական համագործակցության հնարավորությունը, ինչն էլ իր հերթին կնպաստի երկու պետությունների բուհերի միջազգայնացման գործընթացի կատարելագործմանը եւ բարձրագույն կրթության ոլորտում կայուն զարգացման ապահովմանը:

Անդրադառնալով մշակույթի ոլորտին՝ Վահրամ Դումանյանը նշել է, որ երկու երկրների միջեւ լավագույն համագործակցությունը կառուցվում է մշակութային կապերի զարգացման միջոցով: *«Հարգելի՛ տիկին դեսպան, թո՛ւյլ տվեք Ձեր ուշադրությունը հրավիրել բավականին զգայուն մի խնդրի՝ պատերազմից հետո Ադրբեջանի վերահսկողության ներքո անցած տարածքներում հայկական մշակութային ժառանգության պահպանությանը: Այս հարցում մենք ակնկալում ենք առաջադեմ մարդկության աջակցությունը, որպեսզի այդ ժառանգությունը լինի պաշտպանված եւ չաղավաղվեն դրանց պատմությունն ու ծագումը, քանի որ այդ հուշարձանները ոչ միայն հայկական, այլեւ համամարդկային արժեքներ են: Խնդիրը քննարկել ենք ՅՈՒՆԵՍԿՕ-ի ներկայացուցիչների հետ. ամեն ինչ արվում է, որ մշակութային ժառանգությունը պահպանվի, սակայն լիահույս եմ, որ մեր բոլոր գործընկերների արձագանքման արդյունքում Ադրբեջանը զերծ կմնա տարածաշրջանում գտնվող շուրջ 4000 հայկական վանքերը եւ մշակութային հուշարձանները ոչնչացնելուց»*,- շեշտել է ԿԳՄՍ նախարարը՝ հույս հայտնելով, որ երկու երկրների միջեւ բարեկամական եւ արդյունավետ համագործակցությունը կլինի շարունակական, եւ միասին հնարավոր կլինի հասնել շոշափելի արդյունքների, իսկ փոխհամագործակցությունը կբարձրանա որակապես նոր մակարդակի:

***ՀԵղինԵ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ***

Նախագիծ

# Դպրոցների երկարօրյա խմբերի օրինակելի ծրագրեր

ՀՀ ԿԳՄՍ նախարարությունը հանրային քննարկման է ներկայացրել հանրակրթական հիմնական ընդհանուր ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատության երկարօրյա խմբի կրթական օրինակելի ծրագրերի նախագիծը: Առաջարկվող լուծումներն ուղղված են սովորողների ուսումնադաստիարակչական աշխատանքներում ընտանիքին համակողմանի օգնության ցուցաբերմանը, չափորոշչային ու ծրագրային պահանջներին համապատասխան ուսումնական նյութի յուրացման գործընթացում ցածր առաջադիմություն ունեցող սովորողների աջակցմանը, ինչպես նաեւ ինքնուրույն սովորելու հմտությունների, ստեղծագործական ունակությունների եւ ինքնակազմակերպման կարողությունների ձեւավորմանն ու զարգացմանը: Ուսումնական հաստատության երկարօրյա խմբի կրթական ծրագրերը ներառում են երկարօրյա խմբի սովորողների սննդի, հանգստի եւ դասապատրաստման կազմակերպումը՝ որպես երկարօրյա կրթական ծրագրի բաղկացուցիչ մասեր:

Ուսումնական հաստատությունը կարող է իրականացնել հետեւյալ ծրագրերը՝ ծնողի նախաձեռնությամբ երկարօրյա խմբում ընդգրկված սովորողների, ինչպես նաեւ դպրոցի կողմից այդ խմբում ընդգրկված ցածր առաջադիմությամբ սովորողների երկարօրյա ուսուցման ծրագիր՝ ըստ կրթության աստիճանների (տարրական եւ միջին դպրոց), ինչպես նաեւ կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող սովորողների եւ սոցիալապես անապահով ընտանիքների, ծնողազուրկ սովորողների երկարօրյա ուսուցման կազմակերպման ծրագիր:

Կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող սովորողների երկարօրյա ուսուցման ծրագիրը կարող է իրականացվել մանկավարժահոգեբանական ծառայությունների մատուցման եւ կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող յուրաքանչյուր սովորողի՝ անհատական ուսուցման պլանով նախատեսված գիտելիքների, հմտությունների, դիրքորոշման եւ արժեքների ձեւավորման ու զարգացման ուղղություններով:

Տվյալ օրվա ուսումնական պարապմունքներից հետո հաջորդաբար իրականացվում է սննդի, հանգստի, զբոսանքի, ինչպես նաեւ լիցքաթափող, ճանաչողական եւ զարգացնող խաղերի, էքսկուրսիաների, խմբակների, պարապմունքների եւ միջոցառումների կազմակերպում, որոնց ընթացքում ապահովվում է սովորողների շարժունությունը: Տվյալ օրվա ուսումնական պարապմունքներից հետո տարրական եւ միջին դպրոցների սովորողի համար իրականացվում է սննդի կազմակերպում՝ 1-4-րդ դասարաններում՝ մինչեւ 30 րոպե, իսկ 5-9-րդ դասարաններում՝ մինչեւ 20 րոպե տեւողությամբ: Տարրական եւ միջին դպրոցների սովորողի համար իրականացվում է հանգստի (այդ թվում՝ զբոսանքի) կազմակերպում՝ 1-4-րդ դասարաններում՝ մինչեւ 80 րոպե, իսկ 5-9-րդ դասարաններում՝ մինչեւ 30 րոպե տեւողությամբ:

Հանգստից հետո կազմակերպվում է սովորողների դասապատրաստումը, որն իրականացնում է տվյալ ուսումնական հաստատության երկարօրյա ուսուցման մանկավարժական աշխատողը: Տարրական եւ միջին դպրոցների սովորողի համար իրականացվում է դասապատրաստում՝ 1-4-րդ դասարաններում՝ 2 ակադեմիական ժամ, իսկ 5-9-րդ դասարաններում՝ 3 ակադեմիական ժամ տեւողությամբ:

Երկարօրյա խմբում ուսումնադաստիարակչական աշխատանքը ներառում է միմյանց փոխկապակցված երկու ուղղությամբ գործողություններ:

***Հ. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ***

Բուհ

# Ռեկտորների ընտրություններ

Մի շարք պետական բուհերում սպասվում են ռեկտորների ընտրություններ. հայտնի են Երեւանի պետական համալսարանի, Խաչատուր Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի եւ Մ. Հերացու անվան Երեւանի պետական բժշկական համալսարանի ռեկտորների ընտրության օրերը:

**ԵՊՀ ռեկտորի ընտրությունը՝ դեկտեմբերի 17-ին**

Տեղի է ունեցել *«Երեւանի պետական համալսարան»* հիմնադրամի նոր ձեւավորված հոգաբարձուների խորհրդի անդրանիկ նիստը՝ օրակարգում ընդգրկված 5 հարցով:

Նիստի ընթացքում ընտրվել են նախագահը եւ քարտուղարը: ԵՊՀ հոգաբարձուների խորհրդի նախագահի պաշտոնում ընտրվել է ՀՀ փոխվարչապետ **Սուրեն Պապիկյանը,** իսկ քարտուղարի պաշտոնում՝ Մարդու իրավունքների եվրոպական դատարանում ՀՀ ներկայացուցիչ **Եղիշե Կիրակոսյանը:**

Օրակարգային հարցերի շրջանակում ԵՊՀ հոգաբարձուների խորհուրդը ձայների մեծամասնությամբ չեղարկել է ռեկտորի ընտրության՝ նախկինում չկայացած մրցույթը, փոփոխություն է կատարելլ ռեկտորի ընտրության կանոնակարգում եւ որոշում ընդունել ռեկտորի թափուր տեղի համար նոր մրցույթ հայտարարելու մասին: Ըստ այդմ՝ որոշվել է, որ ԵՊՀ ռեկտորի ընտրությունը տեղի է ունենալու ս.թ. դեկտեմբերի 17-ին:

**ՀՄՊՀ ռեկտորի ընտրությունը՝ դեկտեմբերի 18-ին**

Խաչատուր Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանում կայացել է հոգաբարձուների խորհրդի նոր կազմով անդրանիկ նիստը: Օրակարգում ընդգրկված էր 3 հարց.

*- ՀՊՄՀ հոգաբարձուների խորհրդի նախագահի եւ քարտուղարի ընտրություն,*

*- ՀՊՄՀ հոգաբարձուների խորհրդի աշխատակարգում փոփոխություններ կատարելու մասին նախագծի քննարկում եւ հաստատում,*

*- ՀՊՄՀ ռեկտորի պաշտոնի թափուր տեղի մրցույթի հայտարարում:*

Առաջին հարցի քվեարկության արդյունքով ՀՊՄՀ հոգաբարձուների խորհրդի նախագահ է ընտրվել ԿԳՄՍ նախարարի տեղակալ **Ժաննա Անդրեասյանը,** քարտուղար՝ ՀՊՄՀ պրոֆեսոր, հոգեբանական գիտությունների դոկտոր **Կամո Վարդանյանը:**

Հաստատվել է նաեւ աշխատակարգի փոփոխությունը: Խորհրդի որոշմամբ՝ ՀՊՄՀ ռեկտորի մրցույթը տեղի կունենա դեկտեմբերի 18-ին:

**ԵՊԲՀ ռեկտորի ընտրությունը՝ դեկտեմբերի 15-ին**

Մ. Հերացու անվան Երեւանի պետական բժշկական համալսարանում անցկացվել է հոգաբարձուների խորհրդի նոր կազմի առաջին նիստը:

Քվեարկության արդյունքում բուհի հոգաբարձուների խորհրդի նախագահի պաշտոնը խորհրդի անդամները կրկին վստահել են *«Նորք-Մարաշ»* բժշկական կենտրոնի տնօրեն, ինվազիվ-սրտաբան **Միքայել Ադամյանին,** ով, որպես ԵՊԲՀ հոգաբարձուների խորհրդի նախագահ, պաշտոնավարում էր 2020 թվականի օգոստոսի 13-ից: Քարտուղար է ընտրվել դասախոս, սրտաբանության ամբիոնի ասպիրանտ **Անի Ռափյանը:**

Որոշվել է ԵՊԲՀ ռեկտորի մրցույթն անցկացնել դեկտեմբերի 15-ին:

Հուշագիր

## Հինգ տարի ժամկետով

ՀՀ ԿԳՄՍ նախարարությունը՝ ի դեմս նախարար **Վահրամ Դումանյանի,** եւ *«ԿԱՋԱ»* շվեյցարական մարդասիրական հիմնադրամը՝ ի դեմս հիմնադրամի տնօրեն **Տաթեւիկ Բաղդասարյանի,** *«ԱՐԵՎ»* տեխնոլոգիական ուսուցման ծրագրի շրջանակում կնքել են փոխըմբռնման հուշագիր՝ տեխնոլոգիական մասնագիտական ուսուցման ձեւաչափի զարգացման, ներդրման եւ հնարավորությունների ընդլայնման նպատակով:

Հուշագիրը կգործի 5 տարի ժամկետով:

Համաձայն ստորագրված փաստաթղթի՝ կողմերը կհամագործակցեն տեխնոլոգիական կրթության եւ ուսուցման ոլորտի նախնական (արհեստագործական) եւ միջին մասնագիտական ուսումնական հաստատությունների կադրերի եւ ուսանողների վերապատրաստման, նշյալ հաստատությունների ուսումնամեթոդական եւ նյութատեխնիկական բազայի բարելավման, ինչպես նաեւ ՄԿՈՒ հաստատությունների ու գործատուների միջեւ կապերի ձեւավորման եւ ամրապնդման շուրջ:

Նախարարությունը պարտավորվում է աջակցել տեխնոլոգիական մասնագիտությունների՝ էլեկտրատեխնիկայի, էներգետիկայի, արդյունաբերական ավտոմատացման (ռոբոտատեխնիկա) գծով մասնագիտական կադրերի եւ ուսանողների վերապատրաստմանը եւ նպաստել հիմնադրամի ու ՄԿՈՒ կրթական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատությունների միջեւ ուղիղ կապերի հաստատման եւ զարգացման համար անհրաժեշտ պայմանների ստեղծմանը:

Հիմնադրամը պարտավորվում է աջակցել ՄԿՈՒ հաստատությունների վերոնշյալ տեխնոլոգիական մասնագիտությունների գծով մասնագիտական կադրերի եւ աշակերտների վերապատրաստմանը, իրականացնել վերապատրաստումներ այդ հաստատություններում դասավանդողների համար՝ մեկ-երկուշաբաթյա մոդուլային մեթոդաբանությամբ աշխատելու նպատակով, ինչպես նաեւ ուսուցման որակի բարելավման նպատակով ներդնել իր մշակած եւ ԿԳՄՍ նախարարության երաշխավորած ուսումնամեթոդական բազան: Հիմնադրամը կօժանդակի նաեւ կրթության եւ տնտեսության համապատասխան ոլորտը ներկայացնող մասնավոր կազմակերպությունների հետ համագործակցության ամրապնդմանը ուսանողների գործնական աշխատանքները գործատուների մոտ կազմակերպելու միջոցով:

Այդ ամենից զատ՝ հիմնադրամը պարտավորվում է օժանդակել երիտասարդների՝ աշխատաշուկա մուտք գործելուն՝ ապահովելով գործող աշխատաշուկայի պահանջարկին համապատասխան մասնագիտական բարձր որակավորման կարճաժամկետ վերապատրաստումներ եւ նրանց ուղղորդելով դեպի տվյալ ոլորտում գործող կազմակերպություններ:

***Հ. Հ.***

Ասուլիս

# Նոր հնարավորությունների հեռանկարներ՝ երիտասարդ գիտնականների համար

FAST հիմնադրամի նախաձեռնությամբ՝ մեկշաբաթյա այցով Հայաստանում է ԱՄՆ Ռազմածովային հետազոտությունների գլոբալ գրասենյակի պատվիրակությունը: Տեղի է ունեցել մամուլի ասուլիս, որի ընթացքում բանախոսները ներկայացրել են ԱՄՆ ռազմածովային հետազոտությունների գլոբալ գրասենյակի կողմից գիտական ու տեխնոլոգիական ավանդական մտածողությունը կոտրող, բեկումնային նախագծերի (blue sky ideas) ֆինանսավորման հեռանկարները:

Ասուլիսի բանախոսներն էին ՀՀ ԿԳՄՍ նախարարի տեղակալ **Կարեն Թռչունյանը,** ԱՄՆ ռազմածովային հետազոտությունների գլոբալ գրասենյակի նախագծերի ղեկավար **Պատրիկ Ռուզը** եւ FAST հիմնադրամի ռազմավարական ծրագրերի գծով փոխնախագահ **Սյուզաննա Շամախյանը:**




Նախարարի տեղակալ Կարեն Թռչունյանը ողջունել է նմանատիպ նախաձեռնությունների իրականացումը մեր երկրում:

*«Քանի որ այսօր ՀՀ-ում կրթության եւ գիտության նկատմամբ հետաքրքրությունն օրեցօր մեծանում է, հետեւաբար, առաջնահերթություն է այս ոլորտներում ներդրում կատարելը: Միայն կրթված հասարակություն ունենալով՝ կարող ենք կերտել անվտանգ պետություն, ստեղծել նոր տեխնոլոգիաներ եւ առաջադեմ հնարավորություններ: Այսպիսի նախաձեռնությունները բխում են այդ ռազմավարությունից, հետեւաբար ողջունելի է ԱՄՆ ռազմածովային հետազոտությունների գլոբալ գրասենյակի ներկայացուցիչների՝ մեր երկիր այցը, որի շրջանակում բուհերում եւ ակադեմիական ինստիտուտներում ինչպես կիրառական, այնպես էլ ֆունդամենտալ գիտությունների գծով հետազոտություններ ֆինանսավորելու իրական հնարավորություններ կարող են ստեղծվել»*,- նշել է փոխնախարարը՝ հույս հայտնելով, որ 2022 թվականին կլինի հստակ նախանշված ճանապարհային քարտեզ: Ըստ փոխնախարարի՝ գիտության մեջ արագ արդյունք չի լինում. անհրաժեշտ են երկարաժամկետ ներդրումներ, որոնք տարիներ անց են արդյունք տալու:

*«Քանի որ այս ծրագիրը նոր է Հայաստանի համար, որոշ ժամանակ անց միայն կկարողանանք գնահատել դրա արդյունավետությունը: Մենք ունենք շատ լավ երիտասարդ գիտնականներ ու դասախոսներ, որոնք, վստահաբար, կունենան հետաքրքիր ու նորարար գաղափարներ, որոնցով կարող են դիմել այս ծրագրին եւ ստանալ ֆինանսավորում: ԿԳՄՍ նախարարությունն ամեն ինչով կաջակցի, որպեսզի համագործակցությունը կայանա ու լինի արդյունավետ»*,- նշել է Կարեն Թռչունյանը եւ ընդգծել, որ հնարավորինս շատ գիտնականներ ու ստարտափեր պետք է տեղեկանան նախաձեռնության մասին:

FAST հիմնադրամի ռազմավարական ծրագրերի գծով փոխնախագահ Սյուզաննա Շամախյանն իր հերթին նշել է, որ այցը կազմակերպվել է, որպեսզի միջազգային առաջատար գիտական ու նորարարական կառույցների հետ համագործակցության նոր հնարավորություններ ստեղծվեն Հայաստանի համար, եւ երիտասարդ գիտնականները կարողանան հաջողել հենց Հայաստանում: *«Այցի ամբողջ իմաստն այն է, որ ցույց տանք մեր երկրում առկա լավագույն տաղանդների միտքի թռիչքը: Մնացածը կլինի երկարաժամկետ համագործակցության արդյունքում. սա ընդամենն առաջին հիմնաքարն է»*,- նշել է նա:

ԱՄՆ ռազմածովային հետազոտությունների գլոբալ գրասենյակի նախագծերի ղեկավար Պատրիկ Ռուզին ներկայացրել է իրենց ճանաչողական այցի նպատակներն ու ֆինանսավորման հնարավորությունները, որոնցից հայ գիտնականները կարող են օգտվել: Նրա խոսքով՝ գրասենյակը ֆինանսավորում է հիմնարար հետազոտություններ եւ օգնում տաղանդավոր մարդկանց՝ իրագործելու իրենց եզակի մտքերն ու առաջադեմ հետազոտությունները: Այդ նպատակով էլ եկել են Հայաստան՝ գտնելու համագործակցության եզրեր տեղի երիտասարդ գիտնականների ու կազմակերպությունների հետ:

Հայաստանյան այցի ընթացքում ԱՄՆ ռազմածովային հետազոտությունների գլոբալ գրասենյակի, Բանակի միջազգային տեխնոլոգիական կենտրոնի եւ FAST-ի ներկայացուցիչները կայցելեն ՀՀ գիտական, կրթական եւ տեխնոլոգիական առանցքային մի շարք կենտրոններ՝ ծանոթանալու նորարարական գաղափարներին եւ նախագծերին, բացահայտելու ապագայում դրանց ֆինանսավորման հեռանկարները:

***ՀԵղինԵ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ***

*«Դպրոցական մինի այգի»*

# Ամփոփվել են մրցույթի արդյունքները

Ամփոփվել է *«Հայաստանի լավագույն դպրոցական մինի այգի»* մրցույթը, որն իրականացվել է ՀՀ կրթության, գիտության, մշակույթի եւ սպորտի նախարարության, ՄԱԿ-ի Պարենի համաշխարհային ծրագրի (ՊՀԾ), ՌԴ ճյուղային սննդի ինստիտուտի (SIFI) եւ *«Դպրոցական սննդի եւ երեխաների բարեկեցության»* հիմնարկի աջակցությամբ:

Ծրագրի հիմնական նպատակը դպրոցական սննդի ծրագրի վերաբերյալ իրազեկության բարձրացումն է՝ միաժամանակ խթանելով ազգային մակարդակում դպրոցական այգիների հիմնումը:

Դեռեւս այս տարվա ապրիլ ամսին մեկնարկած մրցույթին ՀՀ մարզերից եւ մայրաքաղաք Երեւանից մասնակցելու հայտ է ներկայացրել 82 դպրոց: Մրցույթի ողջ ընթացքում մասնակից դպրոցներին մշտապես տրամադրվել է խորհրդատվություն:

Դպրոցները մինչեւ 2021 թ. հոկտեմբերի 1-ը պետք է ներկայացնեին նախագծերի փաթեթներ՝ անհրաժեշտ փաստաթղթերով եւ լուսանկարներով: Վերջնարդյունքում կազմակերպիչներին ներկայացվել է 33 փաթեթ:



Ընտրություն կատարելու համար մշակված հատուկ չափանիշներում ներառված են չորս բաժիններ՝ կրթական բաղադրիչ, այգու որակ, ներգրավվածության մակարդակ, փաթեթի որակ:

Մրցութային հանձնաժողովի յուրաքանչյուր անդամի կողմից մասնակից դպրոցը կարող է գնահատվել առավելագույնը 50 միավորով, իսկ հանձնաժողովի կողմից դպրոցին տրվող առավելագույն ընդհանուր գնահատականը 350-ն է:

Հանձնաժողովի կազմում ներառվել են ներկայացուցիչներ ՀՀ կրթության, գիտության, մշակույթի եւ սպորտի նախարարությունից, տեղական եւ միջազգային կազմակերպություններից (ՄԱԿ Պարենի համաշխարհային ծրագիր, ՌԴ ճյուղային սննդի ինստիտուտ, ՄԱԿ-ի Զարգացման ծրագիր, ՄԱԿ-ի Պարենի եւ գյուղատնտեսության ծրագիր, Հայ օգնության ֆոնդ, *«Դպրոցական սնունդ եւ երեխաների բարեկեցություն»* հիմնարկ):

Ներկայացված բոլոր 33 փաթեթները գնահատվել են՝ օգտագործելով ընտրության վերը նշված չափանիշները: Մրցութային հանձնաժողովի գնահատման հիման վրա հաղթող են ճանաչվել Վանաձորի Հ. Թումանյանի անվան հ. 3 հիմնական դպրոցը (334 միավոր), Վանաձորի Դանիել Վարուժանի անվան հ. 16 հիմնական դպրոցը (330 միավոր) եւ Ստեփանավանի Սուրբ Գրիգոր Լուսավորչի անվան հ. 2 հիմնական դպրոցը (327 միավոր):

Առաջին տեղ զբաղեցրած դպրոցը կստանա 3000 ԱՄՆ դոլարի դրամաշնորհ: Երկրորդ տեղ զբաղեցրած դպրոցին կտրամադրվի չորանոց, իսկ երրորդ տեղ գրաված դպրոցին՝ սառցարան:

Բացի այդ՝ ավելացվել է երկու անվանակարգ այն դպրոցների համար, որոնք չեն հաղթել, սակայն ունեցել են նկատելի արդյունքներ: *«Լավագույն ձեւավորում»* անվանակարգում հաղթել է Կոտայքի մարզի Բջնի համայնքի Հովհաննես Թումանյանի անվան միջնակարգ դպրոցը, իսկ *«Լավագույն բերք»* անվանակարգը շնորհվել է Գեղարքունիքի մարզի Գեղարքունիք համայնքի միջնակարգ դպրոցին: Նշված երկու դպրոցները կստանան խրախուսական նվերներ:

***Կարինե ՄԱՆՈՒԿՅԱՆ***

*Անօդաչու թռչող սարքեր*

# Համագործակցություն՝ օդային ռոբոտատեխնիկայի ոլորտում

Պոլիտեխնիկի օդային ռոբոտատեխնիկայի ուսումնահետազոտական կենտրոնում *«Հայաստանի ազգային պոլիտեխնիկական համալսարան»* հիմնադրամի եւ *«Գիտական նորարարության եւ կրթության կենտրոն»* հիմնադրամի միջեւ կնքվեց համագործակցության պայմանագիր, ըստ որի առաջիկայում զարգացվելու եւ վերազինվելու է ՀԱՊՀ-ում գործող օդային ռոբոտատեխնիկայի լաբորատորիան, ինչպես նաեւ իրականացվելու է համատեղ ուսումնասիրություններ եւ հետազոտություններ: Էական նշանակություն է ունենալու նաեւ տեղական եւ միջազգային գործընկերների, այդ թվում` միջազգային հեղինակավոր համալսարանների հետ համագործակցությունը:

Պայմանագրի կնքման հանդիսավոր արարողությանը ներկա էին ՀՀ կրթության, գիտության, մշակույթի եւ սպորտի նախարարի տեղակալ **Կարեն Թռչունյանը,** Բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարար տեղակալ **Ռոբերտ Խաչատրյանը,** Բուհի հոգաբարձուների խորհրդի նախագահ **Հովիկ Մուսայելյանը,** ռեկտոր **Գոռ Վարդանյանը,** Գիտական նորարարության եւ կրթության կենտրոնի Հոգաբարձուների խորհրդի նախագահ **Հայկ Չոբանյանը,** պրոռեկտորներ, պրոֆեսորադասախոսական կազմի ներկայացուցիչներ եւ հյուրեր:



Ողջունելով ներկաներին` ռեկտորը նշեց. *«Ուրախ ենք Ձեզ տեսնելու մեր համալսարանում: Լիահույս եմ, որ այս պայմանագրով նոր որակի համագործակցություն ենք ունենալու: Այս համագործակցությունը արտահայտվելու է համատեղ գիտական մշակումների, կրթական բովանդակության, ինչու չէ, նաեւ համատեղ ուժերով միջազգային փորձի ներգրավման կոնտեքստում: Համագործակցության այս ձեւաչափը Պոլիտեխնիկական համալսարանի համար չափազանց կարեւոր է, որովհետեւ անօդաչու թռչող սարքերի կամ օդային ռոբոտատեխնիկայի ոլորտը առհասարակ միավորում է դասական ինժեներական մասնագիտությունների մի շարք ուղղություններ: Այդ ուղղությունները առանձին պատկերացնելը անհնար է, եւ նոր գիտության, ժամանակակից տեխնոլոգիաների մշակման արդյունքները ցույց են տվել, որ ոլորտի համագործակցությունն արտահայտվում է թե՛ գիտական խմբերի, թե՛ կրթական տարբեր ուղղությունների համատեղ աշխատանքի արդյունքում: Մենք դիտարկում ենք, որ այս համագործակցության արդյունքում լինելու է այնպիսի բովանդակություն, որի շրջանակներում Պոլիտեխնիկը հնարավորություն է ունենալու բարելավել ե՛ւ գործող կրթական ծրագրերը, ե՛ւ նախատեսել նոր կրթական ծրագրեր: Այստեղ լինելու է այնպիսի գիտական մշակումների պոտենցիալ, որ ուսանողները, երիտասարդ ինժեներները տեսնելու են ապագա` կրթական նոր իրականության մեջ: Այն լինելու է գիտական մշակման արդյունքը արտադրության եւ երկրի անվտանգության հարցերում: Մեր դիտարկմամբ` Պոլիտեխնիկական համալսարանը ունի ենթակառուցվածքներ, բավական գիտական եւ մտավոր ներուժ, իսկ համագործակցող մյուս կողմն ունի համապատասխան որակներ` մասնագիտական եւ ֆինանսական, որի միջոցով մենք կարող ենք այս միջավայրում համատեղ գիտական արժեք ստեղծել»*:

Ելույթներ ունեցան նաեւ ԿԳՄՍՆ նախարարի տեղակալ Կարեն Թռչունյանը, ԲՏԱ նախարարի տեղակալ Ռոբերտ Խաչատրյանը, ՀԱՊՀ Հոգաբարձուների խորհրդի նախագահ Հովիկ Մուսայելյանը եւ Գիտական նորարարության եւ կրթության կենտրոնի Հոգաբարձուների խորհրդի նախագահ Հայկ Չոբանյանը:

Ըստ Հ.Չոբանյանի` Հայաստանի համար նորարարության, գիտելիքի, գիտության արդյունաբերության նոր ժամանակաշրջան պետք է գա եւ այդ ժամանակաշրջանը պետք է գա հենց նմանատիպ նախաձեռնություններով: *«Համոզված եմ, որ այսօր ընդամենը մի փոքր գործընթաց ենք սկսում այն մեծ ճանապարհին, որը մեզ սպասվում է առջեւում եւ թող Աստված մեզ ուժ տա, որ մենք բոլորս համախմբված լինենք եւ կարողանանք երկարաժամկետ մեծ եւ հաղթանակի տարվող խնդիրները լուծենք: Հաջողություն բոլորիս»*,- նշեց Հայկ Չոբանյանը:

Համագործակցության պայմանագրով նախատեսվում է նաեւ լաբորատորիայում ներգրավվել բարձրակարգ տաղանդներ Հայաստանից եւ ամբողջ աշխարհից` կարճաժամկետ եւ երկարաժամկետ նախագծեր, միջազգային գործընկերություններ, ռազմավարական ներգրավվածություններ եւ խորհրդատվական հարթակներ ստեղծելու համար:

*Բուհ*

## Ինքնավարության հարցի շուրջ

Հայ-Ռուսական համալսարանում կայացել է *«Բուհերի ինքնավարության եւ ակադեմիական ազատության սահմանադրաիրավական խնդիրները»* թեմայով կլոր սեղան-քննարկում:

*«Իսկապես ուրախ եմ, որ այսօր այս քննարկումը տեղի է ունենում մեր համալսարանում: Այն առավել քան արդիական է իմ կարծիքով, որովհետեւ երեկ մենք ականատես եղանք Արդարադատության նախարարության կողմից անցկացված լայն մի միջոցառմանը, որի նպատակն էր ՀՀ նոր Սահմանադրության ուղղությամբ քննարկումներ սկսելը: Եվ, իհարկե, այս ենթատեքստում մեզ համար կարեւորագույն խնդիր է բուհերի եւ համալսարանների ինքնավարությունը, ակադեմիական ազատությունը ոչ միայն շեշտադրել, այլ նաեւ բարձրացնել սահմանադրականության մակարդակին: Այո՛, մենք իսկապես համոզված ենք, որ այս թեզը համալսարանների ինքնավարության եւ ակադեմիական ազատության, ավտոնոմ կառավարման թեզը պարտադիր պետք է տեղ գտնի ՀՀ նոր Սահմանադրությունում, եթե, իհարկե, այդ աշխատանքները (սահմանադրական բարեփոխումները) պսակվեն հաջողությամբ: Ես ուրախ եմ նաեւ այն փաստից, որ Հայ-Ռուսական համալսարանն այսօր մեր երկրի համալսարանական հանրության առաջատարն է այս իմաստով, որովհետեւ մեր կառավարման համակարգը եզակի եւ ունիկալ է եւ արդեն ապացուցել է իր ոչ միայն կենսունակությունը, նաեւ բացարձակ արդյունավետությունը: Կառավարման համակարգը, որը հենց ապահովում է բուհի ինքնավարությունը, ակադեմիական ազատությունը եւ ազատ ակադեմիական հարթակ լինելու ոչ միայն հնարավորությունը, այլ նաեւ պարտավորությունը»*,- իր բացման խոսքում շեշտել է Հայ-Ռուսական համալսարանի ռեկտոր, պրոֆեսոր Արմեն Դարբինյանը:

***շարունակությունը` էջ 6***

*Նոր նախագիծ*

# Ընթերցում են տարրական դպրոցի սովորողները

*«Կրթության զարգացման եւ նորարարության ազգային կենտրոն»* (ԿԶՆԱԿ) հիմնադրամի նախաձեռնությամբ մեկնարկել է *«Ընթերցանությունը»* նախագիծը` նախատեսված տարրական դպրոցի սովորողների համար:

Այն իրականացվում է որպես տարրական դպրոցում ընթերցանության ուսուցման արդյունքները գնահատելու եւ դրա հիման վրա հետագա գործողությունները պլանավորելու գործընթաց եւ նպատակ ունի բարելավելու հանրակրթության տարրական աստիճանում սովորողների ընթերցանության որակը:

*«Ընթերցանությունը»* նախագիծն իրականացվում է ըստ մարզերի` յուրաքանչյուր մարզից ընդգրկելով առնվազն 5 դպրոց:

Մեկնարկը տրվել է Արմավիրի մարզի 5 դպրոցներից (Նորավան, Սարդարապատ, Բամբակաշատ, Մեծամոր եւ Մյասնիկյան համայնքների դպրոցներ), որոնք արդեն ստացել են սովորողների ընթերցելու կարողությունները գնահատող գործիք, որի միջոցով ստուգվում է երկրորդ դասարանցիների ընթերցանությունը: *«Արդյունքները վերլուծելու ենք ուսումնական հաստատությունների հետ համատեղ: Հաշվի առնելով արդյունքները` ձեռնարկվելու են իրավիճակի բարելավման գործողություններ, որոնցում գործառույթներ ունեն դասվարը, մեթոդմիավորման նախագահը, տնօրենի տեղակալը, դպրոցի տնօրենը եւ, իհարկե, ծնողը»*,- ներկայացնելով նախագիծը` նշում է *«ԿԶՆԱԿ»* հիմնադրամի տնօրենի պաշտոնակատար **Արտաշես Թորոսյանը:**

Նա նաեւ նկատում է, որ հանրակրթության բարեփոխման գործընթացում կարեւորագույն հիմնախնդիր է դարձել սովորողների ընթերցանության որակի եւ ընթերցողական հմտությունների ցածր մակարդակը: Որպես հետեւանք` դրանից բխող խնդիրներ են առաջանում հանրակրթական բոլոր առարկաների դասավանդման եւ ուսումնառության ընթացքում, քանի որ ընթերցանության հմտություններն անմիջականորեն ազդում են սովորողների ուսումնառության արդյունավետության եւ մոտիվացիայի վրա: Այս առումով առաջնային անհրաժեշտություն է դառնում հանրակրթության բոլոր աստիճաններում սովորողների ընթերցանության խրախուսումը:

*«ԿԶՆԱԿ»* հիմնադրամի մասնագետները մշակել են ինքնազարգացնող, ընթերցանության բարելավմանը նպաստող մեթոդական ուղեցույց, որը կազմված է խնդիրների լուծման բաժիններից: Դպրոցը կարող է ընտրել մեթոդական ուղեցույցի այս կամ այն բաժինը` փորձելով լուծել առաջադրված խնդիրները:

Հաշվի առնելով, որ նախագծի հիմնական նպատակը տարրական դպրոցում ընթերցանության դրվածքի եւ վիճակի ուսումնասիրությունն է, ուղեցույցում նկարագրված են հետազոտության մասնակիցների աշխատանքները: Մասնավորապես, նկարագրված են դասվարի աշխատանքը եւ այն մեթոդները, որոնք նա կարող է կիրառել սովորողների ընթերցանությունը բարելավելու նպատակով, ինչպես նաեւ տրված են ցուցումներ գրադարանավարի եւ ծնողի դերի վերաբերյալ: Յուրաքանչյուր ամսվա վերջում նախագծում ընդգրկված դպրոցներում տրված գործիքի միջոցով ստուգվում է սովորողների ընթերցանությունը: Արդյունքները համեմատվում են նախորդ ամսվա արդյունքների հետ, այնուհետեւ քննարկվում են մեթոդական միավորման եւ մանկավարժական խորհրդի նիստերում: Հաջորդաբար *«ԿԶՆԱԿ»*-ի հետ համագործակցելով` մշակվում է դասվարին օգնելու ռազմավարություն:

*«ԿԶՆԱԿ»*-ի տնօրենի պաշտոնակատարի տեղեկացմամբ` ծրագիրը կամփոփվի ուսումնական տարվա վերջում, սակայն այն չի ավարտվի, այլ կդառնա դպրոցի ամենօրյա աշխատանքի մաս:

Արտաշես Թորոսյանի խոսքով` *«Ընթերցանությունը»* նախագծի շրջանակում իրար հետ աշխատում են նույն մարզի նվազագույնը հինգ դպրոցներ: Դպրոցները, ըստ *«ԿԶՆԱԿ»*-ի տնօրենի պաշտոնակատարի, չեն մրցում, այլ համագործակցում են, եւ ծրագրի շրջանակում ունեն ընդհանուր մեթոդմիավորում: *«Նրանք միասին քննարկում են առաջացող խնդիրները, կատարում փորձի փոխանակում: Ուսումնական տարվա վերջում յուրաքանչյուր դպրոց համագործակցում է մեկ այլ դպրոցի հետ եւ այդ կերպ տարածում մեթոդը»*,- ամփոփում է Թորոսյանը` հավելելով, որ նախատեսում են հանրապետության բոլոր մարզերում ձեւավորել հինգական դպրոցներով խմբեր, սակայն, եթե ծրագրին միանալու ցանկություն ունեցողներն ավելի շատ լինեն, կձեւավորվեն ավելի մեծ թվով դպրոցների խմբեր:

***Կարինե ՄԱՆՈՒԿՅԱՆ***

# Հրազդանը՝ 2022 թվականի երիտասարդական մայրաքաղաք

*սկիզբը՝ էջ 1*



*«Սա ցույց է տալիս տեղական ինքնակառավարման մարմինների նախաձեռնողությունը՝ օգտագործել այս լրացուցիչ հնարավորությունը՝ համայնքում երիտասարդական կյանքն աշխուժացնելու համար: Սա նաեւ ՀՀ կառավարության գերակայություններից է՝ տարածքային համաչափ զարգացման եւ տարածքների խելամիտ կառավարման տեսանկյունից: Այսինքն՝ անել հնարավորը, որ անկախ իր բնակության վայրից՝ ՀՀ ցանկացած քաղաքացի ունենա հնարավորինս հավասար հնարավորություններ»*,- նշել է փոխնախարարը՝ ընդգծելով, որ մրցույթը եղել է պարզ, թափանցիկ եւ մասնակցային գործընթացով ու ապահովվել է օբյեկտիվության բարձր մակարդակ:

Նրա խոսքով՝ տարվա երիտասարդական քաղաքի շրջանակում անցկացվող միջոցառումները պետք է ուղղված լինեն մշակութային կյանքի աշխուժացմանը, երիտասարդների կարողությունների զարգացմանը եւ նրանց մասնակցության ակտիվացմանը:

Մրցույթի ընթացակարգը ներկայացրել է ԿԳՄՍ նախարարության երիտասարդական քաղաքականության, լրացուցիչ եւ շարունակական կրթության վարչության պետ Գոհար Մամիկոնյանը: Նա նշել է, որ մրցույթի փորձագիտական հանձնաժողովի ձեւավորման նպատակով նախարարությունը հայտարարել էր մրցույթ, որին մասնակցել են երիտասարդական աշխատողներ, երիտասարդական հասարակական կազմակերպությունների, ուսանողական խորհուրդների, նախաձեռնող խմբերի ներկայացուցիչներ, ինչպես նաեւ այլ շահագրգիռ անձինք, ովքեր ուղղակի կամ անուղղակի առնչվում են երիտասարդության ոլորտին եւ պետական քաղաքականությանը:

Արդյունքում՝ ընտրվել են հանձնաժողովի 5 անդամներ, իսկ մյուս 5 անդամներին ներկայացրել է մրցույթի շրջանակում ծառայություն մատուցող *«Ֆիչըր»* կազմակերպությունը: Քվեարկությանը նախորդել են փորձագիտական հանձնաժողովի անդամների այցելությունները հայտատու քաղաքներ, որտեղ նրանք հանդիպել են համայնքների ղեկավարների եւ համայնքապետարանների աշխատակազմերի հետ, ուսումնասիրել հայտերում ներկայացված ծրագրերի համապատասխանությունը երիտասարդական պետական քաղաքականության առաջնայնություններին, ծանոթացել տեղի երիտասարդական կազմակերպությունների ներկայացուցիչների եւ երիտասարդական ակտիվ խմբերի հետ: Քննարկվել են համայնքային երիտասարդական ընթացիկ եւ առաջիկայում նախատեսվող ծրագրերը, ինչպես նաեւ դիտարկվել են համայնքների մարզական, մշակութային, ժամանցային, հանգիստ կազմակերպող հաստատությունների ներուժն ու հնարավորությունները:

Հայտերի գնահատման գործընթացի ամփոփիչ փուլի ընթացքում փորձագիտական հանձնաժողովի յուրաքանչյուր անդամ ներկայացրել է իր գնահատման արդյունքները, ինչպես նաեւ նկատառումները եւ առաջարկությունները:

Հայտերի գնահատման երկրորդ փուլը՝ SMS քվեարկությունը, ավարտվել է հոկտեմբերի 31-ին. 20 օր շարունակ քաղաքացիները հնարավորություն են ունեցել՝ քվեարկելու իրենց նախընտրելի քաղաքի օգտին:

Երկու փուլերի արդյունքների ամփոփումից հետո նախարարի տեղակալ Արթուր Մարտիրոսյանը շնորհավորել է Հրազդանի ներկայացուցիչներին՝ նշելով, որ հաղթանակը նաեւ մեծ պատասխանատվություն է: Փոխնախարարը վստահեցրել է, որ ողջ տարվա ընթացքում նախարարությունը կանի հնարավորը՝ երիտասարդական կազմակերպությունների, միջազգային եւ տեղական գործընկեր կառույցների երիտասարդական, կրթական եւ մշակութային միջոցառումներն ուղղորդելու դեպի տարվա երիտասարդական քաղաք:

Հաղթող եւ մասնակից բոլոր չորս քաղաքների ներկայացուցիչները շնորհակալություն են հայտնել՝ մրցույթը բարձր մակարդակով կազմակերպելու համար, եւ ընդգծել, որ հաշվի կառնեն փորձագիտական հանձնաժողովի բոլոր դիտարկումներն ու առաջարկությունները:

*«Հայաստանի Հանրապետության տարվա երիտասարդական մայրաքաղաք»* մրցույթի նպատակն է նպաստել հանրապետության համայնքների համաչափ զարգացմանը, խրախուսել համայնքային իշխանություններին՝ տեղական մակարդակում մշակելու արդյունավետ երիտասարդական քաղաքականություն, աջակցել մարզային երիտասարդական կազմակերպությունների ու ենթակառույցների առաջխաղացմանը, զարգացնել երիտասարդական նախաձեռնողականությունը, երիտասարդական քաղաքականության ոլորտում համայնքների միջեւ բարեխիղճ եւ գործընկերային հարաբերություններն ինչպես տեղական եւ հանրապետական, այնպես էլ միջազգային մակարդակում:

# Ինքնավարության հարցի շուրջ

*սկիզբը՝ էջ 5*



Ռեկտոր **Արմեն Դարբինյանն** անձնապես համոզված է, որ չի կարող լինել ազատ, անկախ, սուվերեն պետություն՝ առանց ազատ, անկախ եւ սուվերեն համալսարանների: *«Եթե մենք նայենք եւ փորձենք գնահատել աշխարհի երկրներն իրենց արդյունավետության տեսանկյունից, ապա կտեսնենք, որ ամենաառաջատարը եւ ամենաարդյունավետն այն երկրներն են, որոնք ունեն ազատ, ինքնավար, քաղաքական եւ պետական ճնշումներից զուրկ համալսարաններ, որոնք ղեկավարվում են ակադեմիական ազատության սկզբունքներով: Եվ այդ ազատությունը երաշխավորված է եւ իրենց կանոնադրություններով, եւ այդ երկրների օրենսդրությամբ: Ու այդ ազատությունն է, որը բերում է ազատ մտքի, ազատ գաղափարների, ազատ ոգու գերակայությանը հասարակության մեջ: Այն գերակայությանը, որն արդյունքում պահանջատեր է դառնալու արդյունավետ եւ սուվերեն պետությանը»*,- նշել է նա:

Վերոնշյալ կլոր սեղան-քննարկումը կազմակերպել է ՀՌՀ-ի Իրավունքի եւ քաղաքականության ինստիտուտի Իրավունքի տեսության եւ սահմանադրական իրավունքի ամբիոնը:

Հայ-Ռուսական համալսարանի գոյության համարյա 25 տարիներն (2022թ.-ին Հայ-Ռուսական համալսարանը կտոնի իր հիմնադրման 25-ամյակը) ապացուցեցին այն փաստը, որ ակադեմիական ազատության այն դրույթները, որոնք ամրագրված են ՀՀ եւ ՌԴ միջեւ կնքված միջպետական համաձայնագրով, ապահովում են համալսարանի ակադեմիական ազատությունը:

*«Սա միակ դեպքն է Հայաստանի Հանրապետությունում, որտեղ ազատությունն ամրագրված է կանոնադրական կողմնորոշիչ փաստաթղթով, որը միջպետական համաձայնագիր է, որն իր բնույթով ունի առավել ուժ, քան ՀՀ եւ ՌԴ ներպետական օրենսդրությունները: Եվ մեր համալսարանի ռեկտորն ընտրվում է համալսարանի բարձրագույն մարմնի՝ կոնֆերանսի կողմից, որին մասնակցում են 500-ից ավելի մարդ: Բացի այդ՝ ռեկտորը ի պաշտոնե հանդիսանում է գիտական խորհրդի ղեկավար եւ նաեւ գիտխորհուրդը ու կառավարչական խորհուրդը նույնականացված են: Ինձ համար մեծ թյուրիմացություն է թվացել այն հանգամանքը, որ մեր նախահեղափոխական եւ հեղափոխական պաշտոնյաները նույն կերպ են մտածել ու գործել: Իրենց համարում են, որ համալսարանի հանրությունը ունակ չեն արդյունավետ կառավարելու եւ որպեսզի բուհերն արդյունավետ կառավարվեն, ապա նրանց պետք է ղեկավարեն չինովնիկները: Սա է, ցավոք սրտի, մոտեցումը: Եվ սա է նաեւ այն հանգամանքը, որը ստիպում է մեզ այսօր բարձրաձայնել այս խնդիրը: Այսօր միտում է գնում մեր երկրում սահմանադրականության քննարկման ակտիվացման եւ որոշակի սկզբունքների ամրագրման եւ ես տեսնում եմ բացարձակ անհրաժեշտություն, որ մեր համալսարանի հենքով մենք բարձրացնենք համալսարանական հանրությունը եւ նրա ձայնը եւ ամրագրենք ազատության, ազատականության, ազատ մտքի, ազատ գաղափարի, ազատ ոգու, ուսումնասիրությունների, գիտության գերակայության խնդիրները բարձրացնենք սահմանադրականության աստիճանը, որը համարում են սկզբունքային եւ կարեւորագույն խնդիր»*,- ասել է Արմեն Դարբինյանը:

Քննարկմանը զեկույցներով հանդես են եկել ՀՌՀ-ի Իրավունքի եւ քաղաքականության ինստիտուտի Իրավունքի տեսության եւ սահմանադրական իրավունքի ամբիոնի վարիչ, իրավաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր **Արթուր Ղամբարյանը,** ՀՌՀ-ի Իրավունքի եւ քաղաքականության ինստիտուտի Իրավունքի տեսության եւ սահմանադրական իրավունքի ամբիոնի դոցենտ, իրավաբանական գիտությունների թեկնածու **Թամարա Շաքարյանը,** ԵՊՀ Իրավագիտության ֆակուլտետի քաղաքացիական իրավունքի ամբիոնի դոցենտ, իրավաբանական գիտությունների թեկնածու **Արսեն Թավադյանը,** ՀՌՀ-ի Իրավունքի եւ քաղաքականության ինստիտուտի Իրավունքի տեսության եւ սահմանադրական իրավունքի ամբիոնի ասպիրանտ **Իրմա Ճաղարյանը,** ՀՀ Մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմի հետազոտական եւ կրթական կենտրոնի ղեկավար **Նինա Փիրումյանը**, ՀՀ սահմանադրական դատարանի աշխատակազմի իրավախորհրդատվական վարչության փորձագիտականվերլուծական բաժնի գլխավոր մասնագետ **Արտակ Ղազարյանը,** ՀՌՀ-ի Իրավունքի եւ քաղաքականության ինստիտուտի *«Իրավագիտություն»* ուղղության 3-րդ կուրսի ուսանող **Ֆենյա Աղաբեկյանը,** ՀՖՀՀ ուսանողական խորհրդի նախագահ ԺՊ, իրավաբանական ֆակուլտետի 3-րդ կուրսի ուսանող **Արման Դրոշակյանը:**

Երեւանի Կոմիտասի անվան պետական կոնսերվատորիա-100

# Պատառիկներ հայ երգչախմբային արվեստի պատմության էջերից

***Սկիզբը՝ նախորդ համարում***

Հետագայում Սպենդիարյանը Թիֆլիսում մեծն նկարիչ Մարտիրոս Սարյանի խորհրդով ծանոթանում է Հովհաննես Թումանյանի հետ, եւ Վարպետի *«Թմբկաբերդի առումը»* պոեմի հետ ծանոթանալուց հետո ծնվում է գաղափար՝ օպերա ստեղծելու: Տասը տարի է տեւում Ալ.Սպենդիարյանի աշխատանքը *«Ալմաստ»* օպերայի վրա եւ Երեւանում 1933թ. Հունվարի 20-ին *«Ալմաստ»* օպերայի բեմադրությամբ բացվում է Երեւանի օպերային թատրոնը:

Հետագայում Սպենդիարյանը գրում է. *«Ես երազում էի հանդիպել այնպիսի ազնիվ թեմայի, որ կապված լիներ Հայաստանի պատմության հետ, իմ ժողովրդի կյանքի ու հերոսական պայքարի հետ: Այդպիսի երկ էր Հ.Թումանյանի պոեմը, որը իր գեղեցկությամբ, հայրենասիրական գաղափարներով եւ երաժշտական հարուստ դրամատուրգիական հնարներով, անմիջապես հափշտակեց ինձ»*:

*«Ալմաստ»* օպերայի լիբրետոն բանաստեղծուհի Սոֆիա Պարնոկինն է:

Ալ.Սպենդիարյանի առանձնակի ուշադրությանն է արժանանում ժողովրդական երգերի մշակումները երգչախմբի համար, ինչպես նաեւ երգային ժանրին:

Կոմպոզիտորին հավասարապես հետաքրքիր է Ղրիմի թաթարների, ուկրաինական, ռուսական ժողովրդական երգերը, ինչպես նաեւ հեղափոխական երգերից՝ *«Անվախ ընկեր», «Վարշավյանկա», «Մարսելիոզ», «Դուբինուշկա»* եւ այլն:

Ալ.Սպենդիարյանն իրեն դրսեւորել է որպես դեմոկրատ արվեստագետ՝ ով խորապես ապրում է իր հարազատ ժողովրդի պատմական բախտով: Այդ իմաստով հատկանշական են նրա *«Այնտեղ, այնտեղ, դեպ վեհ այն դաշտը»* եւ առանձնապես *«Առ Հայաստան»* վոկալ-սիմֆոնիկ երկը (առաջին ստեղծագործությունն է հայ երաժշտության մեջ՝ նվիրված 1915թ. Եղեռնին), որոնց մեջ ցայտուն կերպով արտահայտված են նրա հայրենասիրական զգացմունքները: Առաջինը գրված Խ.Աբովյանի *«Վերք Հայաստանի»* վեպի, երկրորդը՝ Հովհաննես Հովհաննիսյանի բանաստեղծության հիման վրա: Ալ.Սպենդիարյանն առաջին կոմպոզիտորն էր ով երաժշտականացրեց Մաքսիմ Գորկու *«Չկնորսն ու փերին»* հիանալի բալլադը, արժանանալով հեղինակի եւ բալլադի աաջին կատարող Ֆ.Շալյապինի բարձր գնահատականին:

Հայ դասական սիմֆոնիկ երաժշտության հիմնադիր, կոմպոզիտոր-դիրիժոր-մանկավարժ եւ հասարակական գործիչ Ալեքսանդր Սպենդիարյանը Յալթայում, Սուդակում, Կախովկա ավանում (այժմ՝ Ուկրաինա, Խերսոնի մարզ),ծավալում է բուռն ստեղծագործական գործունեություն: Ստեղծում է երգչախմբեր, երաժշտական դպրոցներ:

1924թ. Հայաստանի իշխանությունների հրավերով Ալ.Սպենդիարյանը տեղափոխվում է Երեւան՝ գլխավորելու հայրենիքի երաժշտական կյանքը: Անգնահատելի է կոմպոզիտորի դերը Հայաստանի առաջին սիմֆոնիկ նվագախմբի հիմնադրման գործում: Նա առաջին կոմպոզիտորն էր, որ արժանացավ ՀԽՍՀ ժողովրդական արտիստի եւ Երեւանի կոնսրվատորիայի պատվավոր պրոֆեսորի կոչումների (1926թ.):



**Ալեքսանդր Սպենդիարյան**



**Մակար Եկմալյան**



**Սպիրիդոն Մելիքյան**



**Ռոմանոս Մելիքյան**

19-րդ դարի վերջին քառորդի երաժշտական գործիչների թվում Մակար Եկմալյանը գրավում է իր պատվավոր տեղը: Նա առաջին հայ կոմպոզիտորն է, որ ավարտելով Պետերբուրգի կոնսերվատորիայի լրիվ դասընթացը՝ ստացել է *«Ազատ արվեստագետի»* դիպլոմ եւ իր ստացած գիտելիքները ծառայեցրել ժողովրդի երաժշտական ստեղծագործության պրոֆեսիոնալ մակարդակի բարձրացմանը:

Մ.Եկմալյանը ծնվել եւ մեծացել է Վաղարշապատում (այժմ Էջմիածին), սովորել է տեղի ժառանգավորաց դպրոցում, մասնակցել եկեղեցական երգեցողությանը: Այստեղ է նա ձեռք բերել նախ՝ իր երաժշտական նախնական կրթությունը՝ լինելով Նիկողայոս Թաշչյանի ամենաընդունակ աշակերտներից եւ օգնականներից մեկը, հատկապես հայկական ձայնանիշներով (Լիմոնջյանի համակարգ) շարականները ձայնագրելու եւ հրատարակելու գործում: Գեւորգ 4-րդ կաթողիկոսը հանձին Մակար Եկմալյանի տեսավ այն մարդուն, ով պետք է կարգավորեր ու վերամշակեր հայկական եկեղեցու ավանդական միաձայն եղանակները: Այս նկատի ուներ նա, երբ 1878թ. Եկմալյանին գործուղեց Պետերբուրգ, որպեսզի նա ստանա երաժշտական բարձրագույն կրթություն: Ուսանողական տարիներից սկսած՝ շուրջ տաս տարի, Եկմալյանն աշխատեց Պատարագի բազմաձայն մշակման ուղղությամբ (Պատարագ՝ այսպես էր կոչվում Աստծուն մատուցած ընծան, զոհը), իսկ ներկայումս քրիստոնեական եկեղեցիներում կատարվող արարողության ընթացքում երկու ձեւով է արտահայտվում՝ արտասանությամբ (ռեչետատիվ), առանց երաժշտության, եւ հոգեւոր երգերի (օրհներգությունների) շարքով, որը նախկինում միաձայն էր:

1893թ. ավարտելով Պատարագի եռաձայն եւ քառաձայն մշակումները՝ կոմպոզիտորը այն ներկայացնում է Պետերբուրգի կոնսերվատորիայի եւ Պալատական կապելլայի խորհուրդների քննությանը՝ արժանանալով ինչպես այդ խորհուրդների, այնպես էլ անվանի ռուս կոմպոզիտորներ Բալակիրեւի եւ Ռիմսկի-Կորսակովի բարձր գնահատականներին:

1895 թվականին բազմաձայն երկսեռ *«Պատարագը»* ընդունվում է հայ եկեղեցու կողմից, իսկ 1896թ. հրատարակվում է Լայպցիգում: Հետագայում Կոմիտասը անդրադառնալով Մ.Եկմալյանի մշակած եռաձայն արական, քառաձայն արական եւ քառաձայն երկսեռ երգչախմբերին նվիրված իր հոդվածում, բարձր գնահատելով նրա ներդրումը հայ հոգեւոր երաժշտության մեջ, նշում է, որ *«Ներդաշնակությունը, պարզությամբ հանդերձ շքեղ է հնչում»*:

1890թ. Մ.Եկմալյանին հրավիրեցին Թիֆլիս՝ որպես Ներսիսյան դպրոցի երգչախմբի ղեկավար, երաժշտության դասատու: 1891թ. Եկմալյանը մեկնեց Թիֆլիս իր հետ տանելով Պ.Չայկովսկու եւ Ա.Ռուբինշտեյնի երաշխավորական նամակները:

Հանձն առնելով ղեկավարել Ներսիսյան դպրոցի երգչախումբը՝ Եկմալյանը ստեղծեց առաջին, մշտական գործող մի կոլեկտիվ, որի կատարողական արվեստը շատ բարձր էր: Եկմալյանն իր իսկ երգչախմբից, արտակարգ երաժշտական ընդունակություններ ունեցող աշակերտներից կրթեց, դաստիարակեց եւ պատրաստեց խմբավարներ, որոնցից շատերը հետագայում դարձան նշանավոր երաժիշտներ: Դրանցից են՝ Արմենակ Շահմուրադյանը, Տիգրան Նալբանդյանը, Մուշեղ Աղայանը, Արամ Տեր-Հովհաննիսյանը, Ազատ Մանուկյանը, Անտոն Մաիլյանը եւ շատ ուրիշներ: Մի քանի ամիս Մ.Եկմալյանին աշակերտել է Կոմիտասը:

Եկմալյանը իր հեղինակած ստեղծագործություններին անդրադարձել է շատ հաճախ եւ դրանք վերամշակել, հղկել, մաքրել ավելորդություններից: Մ.Եկմալյանի մշակումներից հատկապես արժանի են հիշատակման *«Լռեց, ամպերը եկան», «Ով ինչ անուշ», «Զեյթունցիների քայլերգը», «Մանիր մանիր իմ ճախարակ», «Հերիք որդյակ», «Երբ որ բացվին դռներն հուսո»:* Քնարական, հայրենասիրական, ժողովրդական, ազգային, գուսանաաշուղական երգերի մշակումները կազմում են Մ.Եկմալյանի ստեղծագործական ժառանգության մի կարեւոր հատվածը:

1908թ. Թիֆլիսում կոմպոզիտորներ Ռոմանոս Մելիքյանի եւ Ազատ Մանուկյանի ակտիվ մասնակցությամբ կազմակերպվում է *«Երաժշտական լիգա»* միությունը, որն իր շուրջն է համախմբում դպրոցների երգ-երաժշտության դասատուների, երգիչների, խմբավարների, ովքեր զբաղվում էին նաեւ երգ-երաժշտության դասավանդման, երաժշտական գրականության ստեղծման հարցերով: Իսկ 1912թ. Թիֆլիսում կոմպոզիտորներ Սպիրիդոն Մելիքյանի, Միքաել Միրզայանի, դաշնակահար Հովհաննես Տեր-Դավթյանի ակտիվ մասնակցությամբ կազմակերպվում է *«Հայ երաժշտական ընկերություն»* հասարական-մշակութային կազմակերպությունը, որի հիմնական նպատակն էր՝ զարկ տալ հայ երաժշտական մշակույթի զարգացման գործին: Ընկերության կանոնադրության հիմնական խնդիրներից մեկն էլ երգեցիկ խմբեր կազմակերպելը, նրանց համար երաժշտական գրականություն ստեղծելը եւ խմբական երաժշտության տարածման եւ պրոպագանդման գործն էր:

Կոմիտասը, տեղեկանալով ընկերության կազմակերպման մասին, գրում է Սպիրիդոն Մելիքյանին. *«... Լրագրերի մեջ կարդացել էի հիմնածդ երաժշտական միության մասին, իսկույն գուշակեցի, որ դու ես շարժել քաղաքի երաժշտական ճահիճները: Էլ ավելի ուրախացա, որ ապագան ապահովելու համար հրաժարվել ես այն նախագահելուց, զի գործերը ավելի կարեւոր են, ապրես, պապիկս, Սպիրիդոն ջան...»*:

Կարճ ժամանակի ընթացքում երաժշտական ընկերությունը լայն աշխատանք է ծավալում: Կազմակերպվում են ընկերության էքսպիդիցիաներ՝ ժողովրդական երգեր հավաքագրելու համար, անց են կացնում երգչախմբերի մրցանակաբաշխություններ, դասախոսություններ, հայտարարում են երգերի մրցույթներ: Եվ ընկերությանը կից ստեղծվում է երգչախումբ, որը ղեկավարում է Սպիրիդոն Մելիքյանը: Երգչախումբը ծավալում է համերգային լայն գործունեություն, ծրագրում ունենալով Սպ.Մելիքյանի, Ա.Տեր-Ղեւոնդյանի, Կոմիտասի, Մ.Եկմալյանի խմբերգերից: Երգչախմբի անդրանիկ համերգը տեղի ունեցավ 1918թ. նոյեմբերի 2-ին, Թիֆլիսի կոնսերվատորիայի դահլիճում:

Երգչախմբի ելույթը արձագանք գտավ մամուլում՝ *«Մշակ»*, *«Հորիզոն»* թերթերը գրեցին. *«Խմբի որակի, քանակի, խմբավարի ճաշակի, ու երգերի հաջող ընտրության տեսակետից Սպ.Մելիքյանը հմուտ եւ ըստ ամենայնի փորձառու ձեռքերի տակ ձեւավորված այս համերգը հարազատ շեշտերով եւ գեղարվեստական ամբողջությամբ գերազանցեց բոլորի սպասելիքները: Երգեցողության ամբողջ ընթացքում նկատվում էր հմուտ եւ կարող խմբապետի՝ Սպ.Մելիքյանի, ինտենսիվ աշխատանքը, որի հաջորդ գործերին ենք սպասում ...»*:

Թիֆլիսը, հանդիսանալով ռուսահայության մշակութային կյանքի կենտրոնը, որտեղ համախմբված էին հայ գրականության եւ մշակույթի անվանի գործիչները, պատահական չէ, որ երաժշտական կյանքն էլ իր հերթին ավելի ակտիվ վիճակում էր:

Այդ նույն ժամանակաշրջանում Մոսկվայում ուսանելու տարիներին Ռոմանոս Մելիքյանն իր մոտ բարեկամների միջնորդությամբ նշանակվում է Լազարյան ճեմարանի երգ-երաժշտության ուսուցիչ: Անհանգիստ պատանին ուսանողներից եւ սիրողներից կազմում է երգեցիկ խումբ, ելույթներ ունենում տեղի հայկական եկեղեցում, մասնակցում Մոսկվայում գործող հայ մշակույթի գործիչների հետ, ինչպես նաեւ նրանց կողմից ձեռնարկած բոլոր միջոցառումներին: Երգեցիկ խումբը մեծ հեղինակություն է վայելում:

Բազմազան է հայ ժողովրդի երաժշտական մշակույթը իր զարգացման տարբեր շրջաններում: Հայ երգչախմբային արվեստը, որ սկիզբ է առել անհամեմատ ավելի ուշ, սերտորեն կապված է մեր ժողովրդի ընդհանուր եւ առանձնապես երաժշտական մշակույթի զարգացման հետ:

***(շարունակելի)***

***Դավիթ ՂԱԶԱՐՅԱՆ***
***Հայաստանի երաժշտական ընկերության նախագահ,***
***Պրոֆեսոր***

Փոձի՛ր մտապահել

# Բանաստեղծներն են հուշում

*սկիզբը՝ «Կրթություն» թիվ 44-ում*

## 104) Երկնային հյուր

***«Կյանքդ կարծեցիր չքնաղ մի ասուպ,***
***Բայց երազախաբ գիսավոր էր մի»:***

**Հրաչյա Սարուխան**

***«Իսկ դու՝ դարավոր, բայց եւ առույգ ես,***
***Գիսավոր ծուխ ես, բայց եւ խարույկ ես»:***

**Պ. Սեւակ**



Գիսավորը փոքր երկնային մարմին է, որն ունի միգամածային տեսք եւ սովորաբար Արեգակի շուրջը պտտման շատ ձգված ուղեծիր: Արեգակին մոտենալուն զուգընթաց՝ նրա շուրջն առաջանում է վարս (ժամանակավոր մթնոլորտ) եւ գազից ու փոշուց կազմված պոչ: Վարսի վրա ազդող արեգակնային ճնշումը եւ արեգակնային քամին վարսի մասնիկներին մղում են գիսավորի շարժմանը հակառակ, ձեւավորելով պոչը: Նշված երկու գոյացությունների՝ վարս, պոչ, առկայությամբ էլ գիսավորը տարբերվում է աստղակերպից:

Գիսավորները երկնոլորտի ամենագեղեցիկ մարմիններից են: Լուսավոր ամպային թաղանթները, որ շրջապատում են ոչ մեծ միջուկը, երկար պոչը, որ երբեմն ձգվում է երկնոլորտի կեսի չափով, արագ տեղաշարժը աստղերի միջեւ. այս ամենը նրան դարձնում են մյուս երկնային մարմիններից տարբերվող:

Գիսավորի գլուխը եւ պոչը հստակ ուրվագծեր չունեն: Նրանց տեսանելի չափերը կախված են գազերի անջատման ինտենսիվությունից, միջուկի չափերից, Արեգակից ունեցած հեռավորությունից, երկնքի պայծառության աստիճանից: Ժամանակ առ ժամանակ գիսավորը մոտենում է այս կամ այն զանգվածեղ մոլորակին, եւ այդ ժամանակ կտրուկ փոխվում է նրա ուղեծիրը: Պոչի պայծառությունը, մինչեւ երկնքի ֆոնի հետ միաձուլվելը, աստիճանաբար է նվազում, իսկ երկարությունը ձգվում է միլիոնավոր կիլոմետրեր: Գազն ու փոշին գիսավորներում չափազանց նոսր են, նրանք որեւէ ազդեցություն չեն գործում աստղերից եկող լույսի վրա:

Գիսավորների գլուխը նման է կեղտոտ ձնագնդի, դա սառույցի, սառած գազերի ու չցնդող որոշ քարային նյութերի խառնուրդ է: Միջուկներն այնքան փոքր են, որ ծանրության ուժը նրանց վրա տասնյակ հազարավոր անգամ ավելի փոքր է, քան Երկրի վրա է:

Գիսավորներում գազի լուսարձակումը արեգակնային լույսի վերաճառագայթման արդյունք է, ընդ որում՝ վերաճառագայթվում են միայն որոշակի ալիքի երկարության ճառագայթներ, որ բնորոշ են տվյալ մոլեկուլին: Սպեկտրային վերլուծությունը ցույց է տալիս, որ բոլոր գիսավորների գլուխների ճառագայթումը իրականացնում են չեզոք մոլեկուլները՝ բաղկացած երկու կամ երեք ատոմներից: Հաստատված է, որ գիսավորներում կան ատոմական թթվածին, ջրածին եւ ածխածին: Գրանցվել է նաեւ նրանց ռադիոճառագայթումը: Գիսավորների մթնոլորտում նույնիսկ օրգանական մոլեկուլներ են հայտնաբերվել, որ կարող են պարզագույն միկրոօրգանիզմների ավելի բարդ մոլեկուլներ կազմավորել: Այդ պատճառով էլ հետաքրքրությունը նրանց նկատմամբ ավելի է մեծացել. գուցե հենց նրանք են Երկրին 4-4,5 միլիարդ տարի առաջ հասցրել կյանքի սպորներ: Կյանքի ծագման այս վարկածը ստացել է *«պանսպերմիա»* անունը: Մի տիեզերական մարմնից մյուսին կյանքի փոխանցողները, իհարկե, միայն պարզագույն միկրոօրգանիզմները կարող են լինել, ցրտի ու տիեզերքի կոշտ ճառագայթման նկատմամբ կայուն սպորները, որ կարող են գոյատեւել թթվածնի երկարատեւ բացակայության պայմաններում: Այս տեսության կողմնակիցներից են կենսաֆիզիկոս, Նոբելյան մրցանակի դափնեկիր Ֆ. Քրիկը, հայտնի աստղագետ Չանդրա Վիկրամասինգխեն եւ այլոք:

Լաբորատոր փորձերը ցույց են տվել, որ օրգանական մոլեկուլները, որ կան գիսավորների կազմում, ալյումինի ռադիոակտիվ իզոտոպներից մեկի ազդեցությամբ ձեռք են բերում ինքնակազմակերպման ընդունակություն, առաջացնում են ամինաթթուներ եւ հիմքեր, որ կան ԴՆԹ-ի բաղադրության մեջ:

Ալյումինի իզոտոպը, որն օգտագործվում էր այդ փորձերում, ունի համեմատաբար փոքր կիսատրոհում եւ աստիճանաբար փոխակերպվում է մագնիումի կայուն իզոտոպի: Իսկ Երկրի վրա ընկած երկնաքարերի մեջ եղել են մագնիումի իզոտոպի ավելցուկներ (համեմատած նրա՝ Արեգակնային համակարգում պարունակվելու միջինի հետ): Շատ հնարավոր է, որ տիեզերական մարմիններում, եւ, մասնավորապես, գիսավորներում, ինչ-որ ժամանակ եղել է այլումինի հիշյալ իզոտոպը, որն օգնել է օրգանական մոլեկուլներին դառնալ կենդանի մոլեկուլներ:

Այնպես որ, պանսպերմիայի տեսությունն առաջին փորձնական ապացույցներն է կուտակում…

Մի կարեւոր հանգամանք. թեթեւ տիեզերական մարմինները՝ գիսավորներ, աստղակերպեր, երկնաքարեր-գրեթե չեն փոփոխվել այն ժամանակներից, երբ ընթացել է Արեգակնային համակարգի ձեւավորումը: Նրանց ուսումնասիրումը հետազոտողներին թույլ է տալիս նայել անցյալը, Արեգակնային համակարգի մանկական տարիքները: Ինչքան՝վ նրանք ինֆորմացիայի պահող եւ փոխանցող տիեզերական մեխանիզմներ չեն…

**…Նկարում՝ գիսավոր:**

## 105) Ճարտարապետություն

***«Մտնում ես ներս:***
***Նե՜րս ես մտնում կարծես շենքից ապագայի:***
***… Տուֆքարի մեջ լույս խաղում են***
***ճառագայթներն արեգակի,***
***Եվ զարդերն ու խոյակներն են***
***շքամուտքի վրա մրցում:***
***Շենքե՜ր, շենքե՜ր գեղաքանդակ,***
***Եվ կամարնե՜ր աղեղնաձեւ կորընթարդով,***
***Եվ փողոցնե՜ր, պողոտանե՜ր ճառագայթող…»***

**Պ.Սեւակ**

***«Թամանյանը ճարտարապետական անսպառ հմտությունների, փործառությունների, խորունկ տեսությունների եւ անթերի ճաշակի մի ամբողջ աշխարհ է»:***

**Ավ. Իսահակյան**

***«Եթե Թ. Թորամանյանը, գնալով անցյալի խորքերը, գիտակցորեն ուսումնասիրեց եւ գտավ հայոց հին ճարտարապետության լեզուն, ապա Թամանյանն է, որ նորովի հնչեցրեց այդ լեզուն՝ հավերժացնելով այն իր քարեղեն արարումների մեջ: Ճարտարապետ լինելով՝ նա դարձավ նաեւ մեծ կառուցող»:***

**Ն. Միքայելյան**

Ճարտարապետությունը շենքերի ու կառույցների համակարգ է, որ մարդկանց կյանքի ու գործունեության համար ձեւավորում են տարածական միջավայր: Դա առանձին շենքեր են ու դրանց անսամբլներ, հրապարակներ ու պողոտաներ, պուրակներ ու մարզադաշտեր, ավաններ ու ամբողջ քաղաքներ: Յուրաքանչյուր կառույց որոշակի նշանակություն ունի՝ ապրելու, աշխատանքի, հանգստի, սովորելու, առեւտրի, տրանսպորտի համար եւ այլն: Դրանք պետք է լինեն հարմար, հուսալի եւ մարդկանց համար անհրաժեշտ. սա բոլորի համար պարտադիր պայման է: Բայց դրանց ներկայացվող ուրիշ պահանջներ էլ կան՝ գեղեցկությունը եւ մարդկանց մոտ որոշակի գեղագիտական զգացողություններ առաջացնելու եւ տրամադրություն ստեղծելու պայմանները: Հենց այդ հանգամանքներն էլ ճարտարապետությունը դարձնում են արվեստ: Լավագույն ճարտարապետական կառույցները դառնում են երկրների ու ամբողջ դարաշրջանների խորհրդանիշեր (օրինակ՝ էյֆելյան աշտարակը Փարիզում, հին Ակրոպոլիսը Աթենքում, Կոլիզեյը Հռոմում, Կրեմլը Մոսկվայում, Անկախության հրապարակը Երեւանում եւ այլն): Ճարտարապետությունը պետք է բավարարի գեղեցկության օրենքներին՝ օգտակարությունը, հուսալիությունը եւ գեղեցկությունը պետք է ներդաշնակվեն կառույցի մեջ:

Տարբերում են ճարտարապետության երեք հիմնական տեսակներ:

Առաջինը՝ ծավալային կառույցների ճարտարապետությունը: Դրանք բնակելի տներ են, հասարակական, արտադրական կառույցները:

Երկրորդ տեսակը՝ լանդշաֆտային ճարտարապետությունն է, պուրակային տարածքների ստեղծումը կանաչապատ մակերեսով, փոքրիկ կամրջակներով, շատրվաններով եւ այլն:



Երրորդ տեսակը՝ քաղաքաշինականն է՝ նորակառույցներով, պատմական հուշարձանների պահպանումով:

Կառույցի գործառույթը, անկախ ճարտարապետի կամքից, ազդում է նախագծի կոմպոզիցիայի վրա, վերջինիս տալով բնորոշ տեսք:

Հին Եգիպտոսում հիմնական շինանյութը քարն էր, ու կառույցները ստացվում էին կիպ, նմանվում քարե անտառի:

Հին Հռոմում, շնորհիվ բետոնի հայտնագործման եւ սյուների, գմբեթների կիրառման, զգալիորեն մեծացավ հենարանների միջեւ հեռավորությունը, հետեւաբար եւ՝ բաց տարածքների, դրանց կազմակերպման հնարավորությունը:

Ժամանակակից ճարտարապետության ձեւերը շատ բազմազան են՝ շնորհիվ կոնստրուկցիոն նյութերի վիթխարի բազմազանության ու շինտեխնիկայի զարգացման:

Ճարտարապետության մեջ կարեւոր կազմակերպող նշանակություն ունի ռիթմը, այսինքն՝ որոշակի ընդհատումով կրկնվող առանձին ծավալների բաշխումը-դա կլինի սենյակ թե դահլիճ, ծավալային հետեւողական փոփոխություն, սյունաշարերի, պատուհանների, քանդակների խմբավորում եւ այլն: Ուղղաձիգ ուղղությամբ առանձին տարրերի հերթագայումը կառույցին տալիս է թեթեւության զգացողություն, վերելքի ձգտում: Հորիզոնական ուղղությամբ մանրամասների հերթագայումը արդեն կայունության, երկրային լինելու զգացողության ամրապնդում է գիտակցության մեջ:

Ճարտարապետական կոմպոզիցիայի մի ուրիշ կողմ է մասշտաբը, որը ոչ թե նրա իրական չափերն է, այլ ընդհանուր տպավորությունը, որ ստանում են պատուհանների, պատշգամբների, վիտրաժների եւ այլ մանրամասների չափերով:

Թափանցիկ շինանյութերի կիրառումը նոր հնարավորություն է՝ լույսի, տարածքի չափի ընկալման, գեղագիտական լուծումների համար:

**…Նկարում՝ Երեւանի օպերայի եւ բալետի շենքը** (ճարտարապետ՝ Ալեքսանդր Թամանյան: Այս նախագիծը Փարիզի համաշխարհային ցուցահանդեսում շահել է Մեծ ոսկե մեդալ:

## 106) Կերպարվեստ

***«Եթե նկարը չի հուզում եւ բարի մղումներ չի հարուցում մարդու մեջ, ուրեմն՝ չունի գլխավորը՝ կյանքի հավերժական շունչ»:***

**Մ. Սարյան**

***«Գեղարվեստը մեր ներաշխարհի կատարելությունների դրսեւորումն է»:***

**Ավ. Իսահակյան**

***«Դարձիր նորից դեպի քո պատվանդանի***
***բարձունքին,***
***Այնտեղ արվեստ էիր դու, անմահ էիր ու անհաս,***
***Հազար էիր՝ դարձար մեկ, մահկանացու, միայն կին,***
***Դարձիր, ապրիր դարերում, գեղեցկության***
***իմ երազ»:***

**Գեղամ Սարյան**

Արվեստների խումբը, որ հիմնված են կյանքի կոնկրետ երեւույթներն իրենց տեսանելի առարկայական պատկերով վերարտադրելու վրա, անվանում են կերպարվեստ: Դրանց թվին են պատկանում գեղանկարը, քանդակը, գրաֆիկան, գեղարվեստական լուսանկարչությունը: Տեսանելի նույնությունը, կերպարի նմանությունը եւ ռեալությունը այդ արվեստի բնորոշ գիծն է:

*շարունակությունը՝ էջ 9*

# Բանաստեղծներն են հուշում

սկիզբը՝ էջ 8



Այդ նմանությունը յուրաքանչյուր արվեստում ձեռք է բերվում հատուկ միջոցներով. քանդակում՝ ծավալային ձեւերի պլաստիկայով, գեղանկարչության մեջ՝ հարթության վրա գույնի խաղով, գրաֆիկայում՝ պայմանական գույնի վրա (ավելի հաճախ՝ սեւ-սպիտակ) գծերով ու բծերով: Արվեստագետի խնդիրն այն է, որ այդ միջոցներով հասնի իրական տպավորության *«կյանքայնության»*, փոխանցի ամբողջական կերպարը լրիվությամբ: Պատկերելով շրջակա աշխարհի մեկ կոնկրետ ակնթարթ, կերպարային արվեստները ընդունակ են հաղորդելու աշխարհի ողջ բազմազանությունը, ստեղծելու այս կամ այն երեւույթի նպատակային կերպարը: Ա. Սավրասովն իր աշակերտների ասում էր, որ այնպիսի պեյզաժ պետք է անել, որ արտույտը չերեւա կտավում, բայց նրա երգը լսվի: Եվ իրապես, անուղղակիորեն, դիտորդի զգայարաններում կարող են զուգորդվել այլ զգացումներ, շարժումներ եւ այլն: Երեւույթի մի սահմանից (դրսեւորումից) նրա ամբողջականության ընկալում-այսպիսին է կերպարվեստում կերպարի ստեղծման ճանապարհը: Պայմանականություններից-դեպի ճշմարտություն, արտաքինից-ներքին, երեւույթից-էություն: Շատ ճանաչված մտածողներ են ասել, որ լավ դիմանկարում մարդն ավելի է ինքն իրեն նման, քան իրականությունում: Պատճառն այն է, որ նկարիչը հաջողված գործում բացահայտում է էությունը, ոչ հպանցիկը:

Պատկերների արտահայտչականության ուժեղացման համար նկարիչները երբեմն օգտագործում են տեսանելի փոխակերպումների տարբեր հնարներ (գրոտեսկ, խորհրդանիշ, կերպարանափոխություն եւ այլն):

Բայց այդ ձեւերը երկրորդական ու ածանցյալ բնույթ ունեն եւ հանդիսանում են կյանքի ուղղակի պատկերման օրինաչափ զարգացում:

Կերպարվեստի բոլոր տեսակները, արտացոլելով իրական աշխարհը, չեն պատճենում երեւույթները: Դրանք բացահայտում են աշխարհը յուրաքանչյուրը մի տեսանկյունից, կյանքի ամենաէական դրսեւորումների մեջ արտահայտելով արվեստագետի սեփական վերաբերմունքը:

**... Նկարում՝ Երվանդ Քոչար, *«Սասունցի Դավիթ»*:** Դավթի մարմինը շարժման մեջ է՝ պատրաստ մարտի: Նրա հեքիաթային ձին՝ Քուռկիկ Ջալալին, ծառս է ելել հսկայական բազալտե ժայռի վրա: Սմբակների տակ՝ ժայռի անկյունում, բրոնզե թասն է՝ հայ ժողովրդի համբերության խորհրդանիշը:

***«Ես կարող էի վիթխարի ժայռաբեկորներ բերել ու պատվանդան դարձնել մեր Դավթի համար՝ քարաշատ Հայաստանում քար չէր պակասի... Հրեղեն ձիու ոտքերը պատվանդանից դուրս են մնացել...Ես ցանկանում եմ ասել, որ փոքր է Հայաստանը, եւ մեր ժողովրդի կարեւոր հատված դրսում է»:***

**Ե. Քոչար**

Երվանդ Քոչարը հայ քանդակագործության ու գեղանկարչության ամենանշանավոր դեմքերից է, եռաչափ ու կինետիկ գեղանկարչության հիմնադիրներից: Նա ստեղծեց մի գեղանկարչություն, որը ներառում է ժամանակը որպես լրացուցիչ՝ չորրորդ չափ: Եվրոպական արվեստաբանական միտքը Քոչարին համարում էր ժամանակակից արվեստի այն ռահվիրաներից մեկը, որոնք մի քանի տարում վերափոխեցին արդի գեղանկարչության մասին պատկերացումներն ու տակնուվրա արեցին աշխարհը...

***«Սերը միակ բանն է, որ ապրում է՝ երբ սոված է, մեռնում է, երբ կշտանում է...»***

**Ե. Քոչար**

## 107) Կիբեռնետիկ գեղարվեստ

***«Ես որոշել եմ կենտրոնանալ կինետիկ արվեստի վրա՝ առարկա, որտեղ կարող եմ զուգակցել ֆիզիկայի իմ գիտելիքները լույսի հանդեպ սիրո հետ: Լույսի միջոցով ենք մենք ամենաշատը ֆիզիկապես զգում տիեզերական էներգիան: Ձեւի եւ գույնի պատահական փոխազդեցությունները կարող են ակնածանք եւ զարմանք առաջացնել»:***

**Փոլ Ֆրեդլանդեր**

Ֆրանսիացի Նիկոլյա Շյոֆֆերը, հոլանդացի Թեո Յանսենը եւ այլ քանդակագործներ միտք հղացան՝ մատերիական պլաստիկ օբյեկտի կենդանացում: Նրանց գաղափարը ելնում էր այն պատկերացումներից, որ լույսի, ստվերի եւ շարժման համադրությամբ կամ մաթեմատիկական ծրագրավորմամբ կարելի էր ստեղծել գեղարվեստի գործեր՝ արտահայտման ձեւերի անվերջ բազմազանությամբ: Գաղափարի հեղինակներն իրենց մոնումենտալ աշխատանքներում օգտագործում էին էլեկտրամեխանիկական սարքը, հայելային ու թափանցիկ մարմիններ, համակարգչային ծրագրավորում: Լուսային ճառագայթների տեղաշարժերը, նրանց ռիթմիկ բռնկումները, վառ առկայծումները պատկերների պատրանքային շարժումներ էին ստեղծում: Կիբեռնետիկայի ու ինֆորմատիկայի մեթոդների լայն կիրառումը ստեղծագործողի նոր կերպար էր կանխորոշում՝ ինժեներ-նկարչի, իսկ հանդիսատեսը դառնում էր ոչ միայն արտաքին տպավորություն գնահատողը, այլեւ քանդակի ներքին բովանդակության դիտորդը եւս՝ մերժելով դասական այն պատկերացումը, որ արձանը, ի տարբերություն ճարտարապետության, չի կարելի ներսից զննել: Արվեստի այս ուղղության հետեւորդներն աստիճանաբար ավելի էին խորանում էլեկտրոնիկայի հնարավորությունների մեջ՝ օգտագործելով հոլոգրաֆիա, արհեստական լուսավորություն, այլ տեխնոլոգիաներ՝ գտնելու աշխարհի գեղարվեստական արտացոլման նոր եղանակներ: Այս նոր գեղագիտության համար երեւան եկավ նոր եզրույթ՝ *«արհեստական կյանք»*, որի կենսատարածքը robotic art-ն էր: Այսօր մարդու ստեղծած *«բանական»* սարքն ինքն է արդեն ստեղծագործում...



**... Նկարում՝ Փոլ Ֆրեդլանդերի գործերից:**

Ֆիզիկոս եւ արվեստագետ Ֆրեդլանդերի ստեղծած կինետիկ լույսով քանդակները զարմանալի օրինակներ են այն բանի, թե ինչ է տեղի ունենում, երբ միավորվում են գիտությունն ու արվեստը:

## 108) Սիմֆոնիա

***«Այս ախտով մարդիկ չե՛ն վարակվում, չէ՝,***
***Այլ վարակված են ծնվում մայրերից:***
***Այս ախտը միայն նրա՛նց է բռնում,***
***Ովքեր յոթ հազար յոթ գույն են տեսնում***
***ծիածանի մեջ,***
***Ովքեր լսում են***
***Մոլեկուլների խելահեղ վազքի համանվագը...»***

**Պ. Սեւակ**

Բառը հունարեն է, որ ներդաշնակություն, համանվագ է նշանակում: Այն նվագախմբային երաժշտության ժանր է, որ ձեւավորվել է 18-րդ դարում, Վիեննայի կոմպոզիտորների դասական դպրոցի ստեղծագործություններում:

Դասական սիմֆոնիան կազմված է չորս մասից: Առաջին մասը, որը կառուցվում է սոնատային տեսքով, որպես կանոն, ունի արագ տեմպ եւ դրամատիկ բովանդակություն, երբեմն ոչ մեծ դանդաղ նախերգանքով: Երկրորդը դանդաղ է. սովորաբար, դա ստեղծագործության քնարական կենտրոնն է: Երրորդը դարձյալ արագ է, պարային կամ կատակային տրամադրությամբ: Չորրորդ մասը եզրափակիչն է, որ ամփոփում է երաժշտական թեմաների եւ ստեղծագործության կերպարների զարգացումը:

Վիեննայի դասական դպրոցի կոմպոզիտորները նաեւ սահմանել են սիմֆոնիկ նվագախմբի հաստատուն կազմը:



**... Նկարում՝ Արամ Խաչատրյանը՝ նվագավարելիս**

Սիմֆոնիկի հետագա զարգացումը հանգեցրել է դրա տարատեսակների ի հայտ գալուն՝ քնարական, դրամատիկական, էպիկական եւ այլն: Սիմֆոնիան թույլ է տալիս երաժշտական միջոցներով արտահայտել մարդու կյանքի ու զգացմունքների ամենատարբեր կողմերը: Այդ պատճառով էլ աշխարհի առաջատար կոմպոզիտորների մեծամասնությունը անդրադարձել է այս ժանրին:

Սիմֆոնիկ երաժշտության մեծ վարպետ է հայ կոմպոզիտոր Ավետ Տերտերյանը: Նրա սիմֆոնիաները իրենց նորարարական մեծ խիզախությամբ եւ հայկական հոգեւոր երաժշտության մեկ երգչի երգեցողությամբ նոր խոսք էին համաշխարհային երաժշտության մեջ: Տերտերյանն օգտագործել է նաեւ երգեհոն, հարվածային գործիքներ, կիթառ, ազգային նվագարաններ՝ ծիրանափող, թառ, զուռնա եւ այլն: Նրա ոճը միաձուլված է արտասահմանյան ավանգարդիզմի եւ ազգային երաժշտության հետ: Իր սիմֆոնիաներում նա կարծես փորձել է տալ մակրո եւ միկրո տիեզերքների փոխհարաբերությունը, այսինքն՝ փոքրագույն եւ մեծագույն աշխարհների՝ մեկը մյուսի հանդեպ ունեցած դիրքը, մարդու տեղն աշխարհում, նրա զգայությունները հավերժի ճանապարհին:

20-րդ դարի հանճարեղ կոմպոզիտորներից էր Արամ Խաչատրյանը, ում ստեղծագործությունները ընդգրկում են բալետներ, սիմֆոնիաներ, կոնցերտներ, ֆիլմերի երաժշտություն եւ այլն: Նա ստեղծել է հայկական ճանաչելի ոճ, որ բնութագրվում է ակտիվ ռիթմիկ զարգացմամբ:

***«Նա դարձել է մեր փոքր լինելու առասպելի մեծ հերքում, դարձել է մեր փոքր ժողովրդին մեծերի հետ չափելու խորհրդանիշ,... դարձել է մեր քաղաքակրթության վկայականը»:***

**Համո Սահյան**

Սիմֆոնիայի մեծ ու ինքնատիպ վարպետ է Ալեն Հովհաննեսը: Նրա մասին այսպիսի գնահատականներ է տվել համաշխարհային մամուլը. *«Երաժշտություն՝ բացառիկ տաղանդավոր, զորեղ ու առնական»*, *«Հովհաննեսը փնտրում է մեղեդու ազատագրումը»*, *«Ի՜նչ ուրախալի թեթեւացում է լսել ժամանակակից մի երգահանի, որ ասելիք ունի եւ գեղեցիկ է արտահայտում այդ ասելիքը»:* Ամերիկայում նրան անվանում են *«կոմպոզիտոր, որ առաջ է կանգնած մյուսներից»*, Ճապոնիայում եւ Հնդկաստանում՝ *«որոնող հայ»*, Անգլիայում՝ *«խաղաղ ամերիկացի»*: Նրա գեղեցիկ ստեղծագործություններից է *«Արցախ»* սիմֆոնիան:



**... Նկարում՝ ամերիկահայ նշանավոր կոմպոզիտոր Ալեն Հովհաննես:**

*Զարուհի ՊԵՏՐՈՍՅԱՆ*
*Շիրակի մարզի Արթիկի հ. 3 ավագ դպրոցի ուսուցչուհի, բնագետ*

*Աիդա ՊԵՏՐՈՍՅԱՆ*
*Շիրակի մարզի Արթիկի հ. 2 հիմնական դպրոցի ուսուցչուհի, բանասեր*

## Հայտարարություն

Հայտարարվում է մրցույթ՝ ՀՀ Արարատի մարզի «*Արարատ քաղաքի h. 5 միջնակարգ դպրոց*» ՊՈԱԿ-ի հայոց լեզվի եւ գրականության (11 դասաժամ) ուսուցչի թափուր տեղի համար:

Մրցույթն անցկացվում է երկու փուլով՝ թեստավորման եւ հարցազրույցի: Թեստավորման փուլն անցկացվում է՝ ըստ ՀՀ ԿԳՄՍՆ մշակած հարցաշարի: Հարցազրույցի փուլի հարցաշարը կազմում է հաստատությունը եւ յուրաքանչյուր մասնակցի հետ հարցազրույցն անցկացնում առանձին:

Մրցույթին մասնակցելու համար պետք է ներկայացնել՝

*- դիմում (Ձեւ 1), մեկ լուսանկար 3x4 չափի,*

*- բարձրագույն կրթությունը հավաստող փաստաթուղթ (դիպլոմ),*

*- անձը հաստատող փաստաթուղթ,*

*- «Հանրակրթության մասին» ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասին համապատասխան՝ աշխատանքային ստաժի վերաբերյալ տեղեկանք աշխատավայրից եւ աշխատանքային գրքույկի պատճենը (առկայության դեպքում),*

*- ինքնակենսագրություն (Ձեւ 5),*

*- այլ պետությունների քաղաքացիները՝ ՀՀ-ում աշխատելու իրավունքը հավաստող փաստաթուղթ,*

*- ՀՀ արական սեռի քաղաքացիները՝ նաեւ զինվորական գրքույկ,*

*- հրատարակված հոդվածների ցանկ կամ գիտական կոչումը հավաստող փաստաթղթեր (առկայության դեպքում),*

*- որակավորման տարակարգ ունենալու դեպքում՝ հավաստող փաստաթուղթ:*

Տնօրենի կողմից նշանակված պատասխանատու անձը փաստաթղթերի բնօրինակները համեմատում է պատճենների հետ եւ բնօրինակները վերադարձնում: Եթե ներկայացված փաստաթղթերի ցանկն ամբողջական չէ կամ առկա են թերություններ, մասնակիցը կարող է մինչեւ փաստաթղթերի ընդունման ժամկետի ավարտը վերացնել եւ համալրել դրանք:

Փաստաթղթերն ընդունվում են ***նոյեմբերի 10-ից մինչեւ նոյեմբերի 23-ը ներառյալ, ամեն օր՝ ժամը 10:00-ից 15:00-ը, բացի շաբաթ, կիրակի եւ այլ ոչ աշխատանքային օրերից:***

Մրցույթը տեղի կունենա ***նոյեմբերի 25-ին՝ ժամը 14:00-ին,*** ՀՀ Արարատի մարզի Արարատ քաղաքի h. 5 միջնակարգ դպրոցում, հասցեն՝ ք. Արարատ, ՌԿՖ-ի բանավան, շ. 24:

Տեղեկությունների համար զանգահարել՝ (0234) 6-38-25 հեռախոսահամարով:

## Հայտարարություն

Հայտարարվում է մրցույթ՝ ՀՀ Կոտայքի մարզի «*Մայակովսկու Հ. Հովհաննիսյանի անվան միջնակարգ դպրոց*» ՊՈԱԿ-ի ինֆորմատիկայի (7 դասաժամ) ուսուցչի թափուր տեղի համար:

Մրցույթն անցկացվում է երկու փուլով՝ թեստավորման եւ հարցազրույցի: Թեստավորման փուլն անցկացվում է՝ ըստ ՀՀ ԿԳՄՍՆ մշակած հարցաշարի: Հարցազրույցի փուլի հարցաշարը կազմում է հաստատությունը եւ յուրաքանչյուր մասնակցի հետ հարցազրույցն անցկացնում առանձին:

Մրցույթին մասնակցելու համար պետք է ներկայացնել՝

*- դիմում (Ձեւ 1), մեկ լուսանկար 3x4 չափի,*

*- բարձրագույն կրթությունը հավաստող փաստաթուղթ (դիպլոմ),*

*- անձը հաստատող փաստաթուղթ,*

*- «Հանրակրթության մասին» ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասին համապատասխան՝ աշխատանքային ստաժի վերաբերյալ տեղեկանք աշխատավայրից եւ աշխատանքային գրքույկի պատճենը (առկայության դեպքում),*

*- ինքնակենսագրություն (Ձեւ 5),*

*- այլ պետությունների քաղաքացիները՝ ՀՀ-ում աշխատելու իրավունքը հավաստող փաստաթուղթ,*

*- ՀՀ արական սեռի քաղաքացիները՝ նաեւ զինվորական գրքույկ,*

*- հրատարակված հոդվածների ցանկ կամ գիտական կոչումը հավաստող փաստաթղթեր (առկայության դեպքում),*

*- որակավորման տարակարգ ունենալու դեպքում՝ հավաստող փաստաթուղթ:*

Տնօրենի կողմից նշանակված պատասխանատու անձը փաստաթղթերի բնօրինակները համեմատում է պատճենների հետ եւ բնօրինակները վերադարձնում: Եթե ներկայացված փաստաթղթերի ցանկն ամբողջական չէ կամ առկա են թերություններ, մասնակիցը կարող է մինչեւ փաստաթղթերի ընդունման ժամկետի ավարտը վերացնել եւ համալրել դրանք:

Փաստաթղթերն ընդունվում են ***նոյեմբերի 10-ից մինչեւ նոյեմբերի 23-ը ներառյալ, ամեն օր՝ ժամը 10:00-ից 15:00-ը, բացի շաբաթ, կիրակի եւ այլ ոչ աշխատանքային օրերից:***

Մրցույթը տեղի կունենա ***նոյեմբերի 25-ին՝ ժամը 14:00-ին,*** ՀՀ Կոտայքի մարզի Մայակովսկու Հ. Հովհաննիսյանի անվան միջնակարգ դպրոցում, հասցեն՝ գ. Մայակովսկի, Լ. Դուրյան 2/4:

Տեղեկությունների համար զանգահարել՝ (094) 39-03-30 հեռախոսահամարով:

Արցախ

# Ի զորություն...

Ո՞վ է հերոսը... ում միշտ սպասում ենք մեր պատմության ամենադժնդակ ու օրհասական պահերին: Սպասում ենք՝ ոչ թե նախատակի նվաղուն սպասումով, այլ կյանքին ու ապագային կառչածի պրկված ջղերով՝ երբեք չհավատալով, որ պատուհասած արհավիրքը մեզ իսպառ կբնաջնջի ու Աստծուց մեր բաժին օրհնությունն իր ամենակուլ երախը կառնի...

Իսկ արցախցիներս, առանց այդ օրհնության, ասել է թե՝ անհայրենիք, ապրել չենք կարող... Եվ դարեդար ծգվող ցպահանջ դիմակայումն իրականանում է նոր հերոսների բանակով, մեր դյուցազնավեպերից ու առասպելներից հառնող քաջ ու անձնուրաց կերպարներով...

Թերեւս նրանց պատգամով է, որ 44-օրյա պատերազմի տարելիցին թշնամական աքցանի մեջ առնված Արցախի մայրաքաղաք Ստեփանակերտում հենց վերածնունդը խորհրդանշող քանդակ է տեղադրվել:

*«Մենք ենք,մեր սարերը»* կոթողի տարածքում է հանգրվանել քանդակը՝ ի զորություն եւ ի պաշտպանություն ազատասիրությունն ու կենսասիրությունը աշխարհին ներկայացնող ու հավերժությանն իր իմաստնությամբ հաղորդակցվող Արցախի:

Նոր ծառ-քանդակի հեղինակը քանդակագործ **Վարազդատ Համբարձումյանն** է, ում շատ աշխատանքներ տեղ են գտել մեր զորամասերում: Իր խոսքով՝ զորամասերում տեղադրված թուր-խաչերն իրենց խորխտությամբ ներկայացնում են Աստծո թրի նմանվող խոսքը: Իսկ ծառ-քանդակը՝ *«Վերածնունդ»* անունով, բոլորիս հույսի արտահայտությունն է:

Քանդակը ամեն կողմից հատված հաստաբուն ծառ է, սակայն արմատով իր հողին կառչած եւ թրատված ճյուղերից վերընձյուղված զարմանահրաշ բողբոջով:Քանդակի հորինվածքում յուրաքանչյուր ճյուղ մի փորձություն է խորհրդանշում, որը պետք է հաղթահարենք ազգովի... Առաջիկայում քանդակի կողքին կտեղադրվի նուռ՝ կյանքի շարունակության հաստատումով: Վ.Համբարձումյանն իր խոսքում շեշտեց նաեւ Ստեփանակերտի քաղաքապետարանի աջակցության մասին:



Մեզ հետ զրույցում Ստեփանակերտի փոխքաղաքապետ **Սամվել Ղուլյանը** նշեց. *«Իբրեւ հայրենիքի համար իրենց կյանքը նվիրաբերած հերոսների հիշատակի խնկարկում՝ պարտավոր ենք սրբորեն կատարել նրանց պատգամը. ապրել ու արարել Արցախում: Այս քանդակը դրա մեկ արտահայտությունն է, քանզի մեր անձնուրաց զոհյալների սխրանքի ծիրում է գալիք սերունդների վերածնվող հայրենիքը»:*

***Նվարդ ԱԼԵՔՍԱՆՅԱՆ***
***ք. Ստեփանակերտ***
***մեր սեփական թղթակից***

## Հայտարարություն

Հայտարարվում է մրցույթ՝ ՀՀ ԿԳՄՍՆ «*Երեւանի Ա. Երզնկյանի անվան h. 118 ավագ դպրոց*» ՊՈԱԿ-ի հայոց լեզվի (11 դասաժամ), մաթեմատիկայի (24 դասաժամ), ֆիզկուլտուրայի (20 դասաժամ) ուսուցչի թափուր տեղերի համար:

Մրցույթն անցկացվում է երկու փուլով՝ թեստավորման եւ հարցազրույցի: Թեստավորման փուլն անցկացվում է՝ ըստ ՀՀ ԿԳՄՍՆ մշակած հարցաշարի: Հարցազրույցի փուլի հարցաշարը կազմում է հաստատությունը եւ յուրաքանչյուր մասնակցի հետ հարցազրույցն անցկացնում առանձին:

Մրցույթին մասնակցելու համար պետք է ներկայացնել՝

*- դիմում (Ձեւ 1), մեկ լուսանկար 3x4 չափի,*

*- բարձրագույն կրթությունը հավաստող փաստաթուղթ (դիպլոմ),*

*- անձը հաստատող փաստաթուղթ,*

*- «Հանրակրթության մասին» ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասին համապատասխան՝ աշխատանքային ստաժի վերաբերյալ տեղեկանք աշխատավայրից եւ աշխատանքային գրքույկի պատճենը (առկայության դեպքում),*

*- ինքնակենսագրություն (Ձեւ 5),*

*- այլ պետությունների քաղաքացիները՝ ՀՀ-ում աշխատելու իրավունքը հավաստող փաստաթուղթ,*

*- ՀՀ արական սեռի քաղաքացիները՝ նաեւ զինվորական գրքույկ,*

*- հրատարակված հոդվածների ցանկ կամ գիտական կոչումը հավաստող փաստաթղթեր (առկայության դեպքում),*

*- որակավորման տարակարգ ունենալու դեպքում՝ հավաստող փաստաթուղթ:*

Տնօրենի կողմից նշանակված պատասխանատու անձը փաստաթղթերի բնօրինակները համեմատում է պատճենների հետ եւ բնօրինակները վերադարձնում: Եթե ներկայացված փաստաթղթերի ցանկն ամբողջական չէ կամ առկա են թերություններ, մասնակիցը կարող է մինչեւ փաստաթղթերի ընդունման ժամկետի ավարտը վերացնել եւ համալրել դրանք:

Փաստաթղթերն ընդունվում են ***մինչեւ նոյեմբերի 22-ը ներառյալ, ամեն օր՝ ժամը 10:00-ից 15:00-ը, բացի շաբաթ, կիրակի եւ այլ ոչ աշխատանքային օրերից:***

Մրցույթը տեղի կունենա ***նոյեմբերի 26-ին՝ ժամը 13:00-ին,*** ՀՀ ԿԳՄՍՆ Երեւանի Ա. Երզնկյանի անվան h. 118 ավագ դպրոցում, հասցեն՝ ք. Երեւան, Արզումանյան 8:

Տեղեկությունների համար զանգահարել՝ (010) 39-10-70 հեռախոսահամարով:

## Հայտարարություն

Հայտարարվում է մրցույթ՝ ՀՀ Կոտայքի մարզի «*Հրազդանի Անանիա Շիրակացու անվան h. 6 հիմնական դպրոց*» ՊՈԱԿ-ի զինղեկի թափուր տեղի համար:

Մրցույթն անցկացվում է երկու փուլով՝ թեստավորման եւ հարցազրույցի: Թեստավորման փուլն անցկացվում է՝ ըստ ՀՀ ԿԳՄՍՆ մշակած հարցաշարի: Հարցազրույցի փուլի հարցաշարը կազմում է հաստատությունը եւ յուրաքանչյուր մասնակցի հետ հարցազրույցն անցկացնում առանձին:

Մրցույթին մասնակցելու համար պետք է ներկայացնել՝

*- դիմում (Ձեւ 1), մեկ լուսանկար 3x4 չափի,*

*- բարձրագույն կրթությունը հավաստող փաստաթուղթ (դիպլոմ),*

*- անձը հաստատող փաստաթուղթ,*

*- «Հանրակրթության մասին» ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասին համապատասխան՝ աշխատանքային ստաժի վերաբերյալ տեղեկանք աշխատավայրից եւ աշխատանքային գրքույկի պատճենը (առկայության դեպքում),*

*- ինքնակենսագրություն (Ձեւ 5),*

*- այլ պետությունների քաղաքացիները՝ ՀՀ-ում աշխատելու իրավունքը հավաստող փաստաթուղթ,*

*- ՀՀ արական սեռի քաղաքացիները՝ նաեւ զինվորական գրքույկ,*

*- հրատարակված հոդվածների ցանկ կամ գիտական կոչումը հավաստող փաստաթղթեր (առկայության դեպքում),*

*- որակավորման տարակարգ ունենալու դեպքում՝ հավաստող փաստաթուղթ:*

Տնօրենի կողմից նշանակված պատասխանատու անձը փաստաթղթերի բնօրինակները համեմատում է պատճենների հետ եւ բնօրինակները վերադարձնում: Եթե ներկայացված փաստաթղթերի ցանկն ամբողջական չէ կամ առկա են թերություններ, մասնակիցը կարող է մինչեւ փաստաթղթերի ընդունման ժամկետի ավարտը վերացնել եւ համալրել դրանք:

Փաստաթղթերն ընդունվում են ***մինչեւ նոյեմբերի 23-ը ներառյալ, ամեն օր՝ ժամը 10:00-ից 15:00-ը, բացի շաբաթ, կիրակի եւ այլ ոչ աշխատանքային օրերից:***

Մրցույթը տեղի կունենա ***նոյեմբերի 24-ին՝ ժամը 14:00-ին,*** ՀՀ Կոտայքի մարզի Հրազդանի Անանիա Շիրակացու անվան h. 6 հիմնական դպրոցում, հասցեն՝ ք. Հրազդան, Վանատուր 396:

Տեղեկությունների համար զանգահարել՝ (093) 25-47-93 հեռախոսահամարով:

## Հայտարարություն

Հայտարարվում է մրցույթ՝ ՀՀ Գեղարքունիքի մարզի «*Գավառի Ա. Իսահակյանի անվան h. 4 հիմնական դպրոց*» ՊՈԱԿ-ի ռուսաց լեզվի (30 դասաժամ), աշխարհագրության (17 դասաժամ) ուսուցչի թափուր տեղերի համար:

Մրցույթն անցկացվում է երկու փուլով՝ թեստավորման եւ հարցազրույցի: Թեստավորման փուլն անցկացվում է՝ ըստ ՀՀ ԿԳՄՍՆ մշակած հարցաշարի: Հարցազրույցի փուլի հարցաշարը կազմում է հաստատությունը եւ յուրաքանչյուր մասնակցի հետ հարցազրույցն անցկացնում առանձին:

Մրցույթին մասնակցելու համար պետք է ներկայացնել՝

*- դիմում (Ձեւ 1), մեկ լուսանկար 3x4 չափի,*

*- բարձրագույն կրթությունը հավաստող փաստաթուղթ (դիպլոմ),*

*- անձը հաստատող փաստաթուղթ,*

*- «Հանրակրթության մասին» ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասին համապատասխան՝ աշխատանքային ստաժի վերաբերյալ տեղեկանք աշխատավայրից եւ աշխատանքային գրքույկի պատճենը (առկայության դեպքում),*

*- ինքնակենսագրություն (Ձեւ 5),*

*- այլ պետությունների քաղաքացիները՝ ՀՀ-ում աշխատելու իրավունքը հավաստող փաստաթուղթ,*

*- ՀՀ արական սեռի քաղաքացիները՝ նաեւ զինվորական գրքույկ,*

*- հրատարակված հոդվածների ցանկ կամ գիտական կոչումը հավաստող փաստաթղթեր (առկայության դեպքում),*

*- որակավորման տարակարգ ունենալու դեպքում՝ հավաստող փաստաթուղթ:*

Տնօրենի կողմից նշանակված պատասխանատու անձը փաստաթղթերի բնօրինակները համեմատում է պատճենների հետ եւ բնօրինակները վերադարձնում: Եթե ներկայացված փաստաթղթերի ցանկն ամբողջական չէ կամ առկա են թերություններ, մասնակիցը կարող է մինչեւ փաստաթղթերի ընդունման ժամկետի ավարտը վերացնել եւ համալրել դրանք:

Փաստաթղթերն ընդունվում են ***նոյեմբերի 10-ից մինչեւ նոյեմբերի 23-ը ներառյալ, ամեն օր՝ ժամը 10:00-ից 15:00-ը, բացի շաբաթ, կիրակի եւ այլ ոչ աշխատանքային օրերից:***

Մրցույթը տեղի կունենա ***նոյեմբերի 25-ին՝ ժամը 14:00-ին,*** ՀՀ Գեղարքունիքի մարզի Գավառի Ա. Իսահակյանի անվան h. 4 հիմնական դպրոցում, հասցեն՝ ք. Գավառ, Ռ. Թորգոմյան 1:

Տեղեկությունների համար զանգահարել՝ (099) 00-84-70 հեռախոսահամարով:

## Հայտարարություն

Հայտարարվում է մրցույթ՝ «*Երեւանի h. 201 հիմնական դպրոց*» ՊՈԱԿ-ի ինֆորմատիկայի (5 դասաժամ), կերպարվեստի (2 դասաժամ), ՆԶՊ-ի (3 դասաժամ, զինղեկ) ուսուցչի թափուր տեղերի համար:

Մրցույթն անցկացվում է երկու փուլով՝ թեստավորման եւ հարցազրույցի: Թեստավորման փուլն անցկացվում է՝ ըստ ՀՀ ԿԳՄՍՆ մշակած հարցաշարի: Հարցազրույցի փուլի հարցաշարը կազմում է հաստատությունը եւ յուրաքանչյուր մասնակցի հետ հարցազրույցն անցկացնում առանձին:

Մրցույթին մասնակցելու համար պետք է ներկայացնել՝

*- դիմում (Ձեւ 1), մեկ լուսանկար 3x4 չափի,*

*- բարձրագույն կրթությունը հավաստող փաստաթուղթ (դիպլոմ),*

*- անձը հաստատող փաստաթուղթ,*

*- «Հանրակրթության մասին» ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասին համապատասխան՝ աշխատանքային ստաժի վերաբերյալ տեղեկանք աշխատավայրից եւ աշխատանքային գրքույկի պատճենը (առկայության դեպքում),*

*- ինքնակենսագրություն (Ձեւ 5),*

*- այլ պետությունների քաղաքացիները՝ ՀՀ-ում աշխատելու իրավունքը հավաստող փաստաթուղթ,*

*- ՀՀ արական սեռի քաղաքացիները՝ նաեւ զինվորական գրքույկ,*

*- հրատարակված հոդվածների ցանկ կամ գիտական կոչումը հավաստող փաստաթղթեր (առկայության դեպքում),*

*- որակավորման տարակարգ ունենալու դեպքում՝ հավաստող փաստաթուղթ:*

Տնօրենի կողմից նշանակված պատասխանատու անձը փաստաթղթերի բնօրինակները համեմատում է պատճենների հետ եւ բնօրինակները վերադարձնում: Եթե ներկայացված փաստաթղթերի ցանկն ամբողջական չէ կամ առկա են թերություններ, մասնակիցը կարող է մինչեւ փաստաթղթերի ընդունման ժամկետի ավարտը վերացնել եւ համալրել դրանք:

Փաստաթղթերն ընդունվում են ***մինչեւ նոյեմբերի 22-ը ներառյալ, ամեն օր՝ ժամը 10:00-ից 15:00-ը, բացի շաբաթ, կիրակի եւ այլ ոչ աշխատանքային օրերից:***

Մրցույթը տեղի կունենա ***նոյեմբերի 26-ին՝ ժամը 14:00-ին,*** Երեւանի h. 201 հիմնական դպրոցում, հասցեն՝ ք. Երեւան, Ավան, Աճառյան 40:

Տեղեկությունների համար զանգահարել՝ (010) 61-28-40 հեռախոսահամարով:

## Հայտարարություն

Հայտարարվում է մրցույթ՝ ՀՀ Սյունիքի մարզի «*Արեւիսի հիմնական դպրոց*» ՊՈԱԿ-ի դասվարի (6,5 դասաժամ), մայրենիի, հայոց լեզվի եւ գրականության (5,75 դասաժամ), պատմության (3,75 դասաժամ), Հայոց եկեղեցու պատմության (1 դասաժամ), ֆիզկուլտուրայի (5 դասաժամ), ՆԶՊ-ի (0,5 դասաժամ), ռուսաց լեզվի (5,5 դասաժամ), անգլերենի (3,25 դասաժամ), ֆիզիկայի (1,5 դասաժամ), աշխարհագրության (2 դասաժամ), ինֆորմատիկայի (1 դասաժամ), կերպարվեստի (1,25 դասաժամ), տեխնոլոգիայի (2,25 դասաժամ), երաժշտության (1,5 դասաժամ) ուսուցչի թափուր տեղերի համար:

Մրցույթն անցկացվում է երկու փուլով՝ թեստավորման եւ հարցազրույցի: Թեստավորման փուլն անցկացվում է՝ ըստ ՀՀ ԿԳՄՍՆ մշակած հարցաշարի: Հարցազրույցի փուլի հարցաշարը կազմում է հաստատությունը եւ յուրաքանչյուր մասնակցի հետ հարցազրույցն անցկացնում առանձին:

Մրցույթին մասնակցելու համար պետք է ներկայացնել՝

*- դիմում (Ձեւ 1), մեկ լուսանկար 3x4 չափի,*

*- բարձրագույն կրթությունը հավաստող փաստաթուղթ (դիպլոմ),*

*- անձը հաստատող փաստաթուղթ,*

*- «Հանրակրթության մասին» ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասին համապատասխան՝ աշխատանքային ստաժի վերաբերյալ տեղեկանք աշխատավայրից եւ աշխատանքային գրքույկի պատճենը (առկայության դեպքում),*

*- ինքնակենսագրություն (Ձեւ 5),*

*- այլ պետությունների քաղաքացիները՝ ՀՀ-ում աշխատելու իրավունքը հավաստող փաստաթուղթ,*

*- ՀՀ արական սեռի քաղաքացիները՝ նաեւ զինվորական գրքույկ,*

*- հրատարակված հոդվածների ցանկ կամ գիտական կոչումը հավաստող փաստաթղթեր (առկայության դեպքում),*

*- որակավորման տարակարգ ունենալու դեպքում՝ հավաստող փաստաթուղթ:*

Տնօրենի կողմից նշանակված պատասխանատու անձը փաստաթղթերի բնօրինակները համեմատում է պատճենների հետ եւ բնօրինակները վերադարձնում: Եթե ներկայացված փաստաթղթերի ցանկն ամբողջական չէ կամ առկա են թերություններ, մասնակիցը կարող է մինչեւ փաստաթղթերի ընդունման ժամկետի ավարտը վերացնել եւ համալրել դրանք:

Փաստաթղթերն ընդունվում են ***նոյեմբերի 10-ից մինչեւ նոյեմբերի 23-ը ներառյալ, ամեն օր՝ ժամը 10:00-ից 15:00-ը, բացի շաբաթ, կիրակի եւ այլ ոչ աշխատանքային օրերից:***

Մրցույթը տեղի կունենա ***նոյեմբերի 25-ին՝ ժամը 14:00-ին,*** ՀՀ Սյունիքի մարզի Արեւիսի հիմնական դպրոցում, հասցեն՝ գ. Արեւիս, 1-ին փ., շ. 12:

Տեղեկությունների համար զանգահարել՝ (094) 37-47-53 հեռախոսահամարով:

## Հայտարարություն

Հայտարարվում է մրցույթ՝ ՀՀ Արարատի մարզի «*Մասիս քաղաքի հ. 4 հիմնական դպրոց*» ՊՈԱԿ-ի երաժշտության (1-ին կիսամյակ, 8 դասաժամ, 2-րդ կիսամյակ, 5 դասաժամ) ուսուցչի թափուր տեղի համար:

Մրցույթն անցկացվում է երկու փուլով՝ թեստավորման եւ հարցազրույցի: Թեստավորման փուլն անցկացվում է՝ ըստ ՀՀ ԿԳՄՍՆ մշակած հարցաշարի: Հարցազրույցի փուլի հարցաշարը կազմում է հաստատությունը եւ յուրաքանչյուր մասնակցի հետ հարցազրույցն անցկացնում առանձին:

Մրցույթին մասնակցելու համար պետք է ներկայացնել՝

*- դիմում (Ձեւ 1), մեկ լուսանկար 3x4 չափի,*

*- բարձրագույն կրթությունը հավաստող փաստաթուղթ (դիպլոմ),*

*- անձը հաստատող փաստաթուղթ,*

*- «Հանրակրթության մասին» ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասին համապատասխան՝ աշխատանքային ստաժի վերաբերյալ տեղեկանք աշխատավայրից եւ աշխատանքային գրքույկի պատճենը (առկայության դեպքում),*

*- ինքնակենսագրություն (Ձեւ 5),*

*- այլ պետությունների քաղաքացիները՝ ՀՀ-ում աշխատելու իրավունքը հավաստող փաստաթուղթ,*

*- ՀՀ արական սեռի քաղաքացիները՝ նաեւ զինվորական գրքույկ,*

*- հրատարակված հոդվածների ցանկ կամ գիտական կոչումը հավաստող փաստաթղթեր (առկայության դեպքում),*

*- որակավորման տարակարգ ունենալու դեպքում՝ հավաստող փաստաթուղթ:*

Տնօրենի կողմից նշանակված պատասխանատու անձը փաստաթղթերի բնօրինակները համեմատում է պատճենների հետ եւ բնօրինակները վերադարձնում: Եթե ներկայացված փաստաթղթերի ցանկն ամբողջական չէ կամ առկա են թերություններ, մասնակիցը կարող է մինչեւ փաստաթղթերի ընդունման ժամկետի ավարտը վերացնել եւ համալրել դրանք:

Փաստաթղթերն ընդունվում են ***նոյեմբերի 10-ից մինչեւ նոյեմբերի 23-ը ներառյալ, ամեն օր՝ ժամը 10:00-ից 15:00-ը, բացի շաբաթ, կիրակի եւ այլ ոչ աշխատանքային օրերից:***

Մրցույթը տեղի կունենա ***նոյեմբերի 25-ին՝ ժամը 14:00-ին,*** ՀՀ Արարատի մարզի Մասիս քաղաքի հ. 4 հիմնական դպրոցում, հասցեն՝ ք. Մասիս, 7-րդ փ., հ. 2:

Տեղեկությունների համար զանգահարել՝ (0236) 4-47-50, (093) 73-65-43 հեռախոսահամարներով:

## Հայտարարություն

Հայտարարվում է մրցույթ՝ ՀՀ Արարատի մարզի «*Մերձավանի միջնակարգ դպրոց*» ՊՈԱԿ-ի ֆիզկուլտուրայի (16 դասաժամ), տեխնոլոգիայի (8 դասաժամ) ուսուցչի թափուր տեղերի համար:

Մրցույթն անցկացվում է երկու փուլով՝ թեստավորման եւ հարցազրույցի: Թեստավորման փուլն անցկացվում է՝ ըստ ՀՀ ԿԳՄՍՆ մշակած հարցաշարի: Հարցազրույցի փուլի հարցաշարը կազմում է հաստատությունը եւ յուրաքանչյուր մասնակցի հետ հարցազրույցն անցկացնում առանձին:

Մրցույթին մասնակցելու համար պետք է ներկայացնել՝

*- դիմում (Ձեւ 1), մեկ լուսանկար 3x4 չափի,*

*- բարձրագույն կրթությունը հավաստող փաստաթուղթ (դիպլոմ),*

*- անձը հաստատող փաստաթուղթ,*

*- «Հանրակրթության մասին» ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասին համապատասխան՝ աշխատանքային ստաժի վերաբերյալ տեղեկանք աշխատավայրից եւ աշխատանքային գրքույկի պատճենը (առկայության դեպքում),*

*- ինքնակենսագրություն (Ձեւ 5),*

*- այլ պետությունների քաղաքացիները՝ ՀՀ-ում աշխատելու իրավունքը հավաստող փաստաթուղթ,*

*- ՀՀ արական սեռի քաղաքացիները՝ նաեւ զինվորական գրքույկ,*

*- հրատարակված հոդվածների ցանկ կամ գիտական կոչումը հավաստող փաստաթղթեր (առկայության դեպքում),*

*- որակավորման տարակարգ ունենալու դեպքում՝ հավաստող փաստաթուղթ:*

Տնօրենի կողմից նշանակված պատասխանատու անձը փաստաթղթերի բնօրինակները համեմատում է պատճենների հետ եւ բնօրինակները վերադարձնում: Եթե ներկայացված փաստաթղթերի ցանկն ամբողջական չէ կամ առկա են թերություններ, մասնակիցը կարող է մինչեւ փաստաթղթերի ընդունման ժամկետի ավարտը վերացնել եւ համալրել դրանք:

Փաստաթղթերն ընդունվում են ***նոյեմբերի 10-ից մինչեւ նոյեմբերի 23-ը ներառյալ, ամեն օր՝ ժամը 10:00-ից 15:00-ը, բացի շաբաթ, կիրակի եւ այլ ոչ աշխատանքային օրերից:***

Մրցույթը տեղի կունենա ***նոյեմբերի 25-ին՝ ժամը 14:00-ին,*** ՀՀ Արարատի մարզի Մերձավանի միջնակարգ դպրոցում, հասցեն՝ գ. Մերձավան, Մասիսի 4:

Տեղեկությունների համար զանգահարել՝ (093) 09-67-78 հեռախոսահամարով:

## Հայտարարություն

Հայտարարվում է մրցույթ՝ «*Երեւանի հ. 174 հիմնական դպրոց*» ՊՈԱԿ-ի ռուսաց լեզվի (21 դասաժամ) ուսուցչի թափուր տեղի համար:

Մրցույթն անցկացվում է երկու փուլով՝ թեստավորման եւ հարցազրույցի: Թեստավորման փուլն անցկացվում է՝ ըստ ՀՀ ԿԳՄՍՆ մշակած հարցաշարի: Հարցազրույցի փուլի հարցաշարը կազմում է հաստատությունը եւ յուրաքանչյուր մասնակցի հետ հարցազրույցն անցկացնում առանձին:

Մրցույթին մասնակցելու համար պետք է ներկայացնել՝

*- դիմում (Ձեւ 1), մեկ լուսանկար 3x4 չափի,*

*- բարձրագույն կրթությունը հավաստող փաստաթուղթ (դիպլոմ),*

*- անձը հաստատող փաստաթուղթ,*

*- «Հանրակրթության մասին» ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասին համապատասխան՝ աշխատանքային ստաժի վերաբերյալ տեղեկանք աշխատավայրից եւ աշխատանքային գրքույկի պատճենը (առկայության դեպքում),*

*- ինքնակենսագրություն (Ձեւ 5),*

*- այլ պետությունների քաղաքացիները՝ ՀՀ-ում աշխատելու իրավունքը հավաստող փաստաթուղթ,*

*- ՀՀ արական սեռի քաղաքացիները՝ նաեւ զինվորական գրքույկ,*

*- հրատարակված հոդվածների ցանկ կամ գիտական կոչումը հավաստող փաստաթղթեր (առկայության դեպքում),*

*- որակավորման տարակարգ ունենալու դեպքում՝ հավաստող փաստաթուղթ:*

Տնօրենի կողմից նշանակված պատասխանատու անձը փաստաթղթերի բնօրինակները համեմատում է պատճենների հետ եւ բնօրինակները վերադարձնում: Եթե ներկայացված փաստաթղթերի ցանկն ամբողջական չէ կամ առկա են թերություններ, մասնակիցը կարող է մինչեւ փաստաթղթերի ընդունման ժամկետի ավարտը վերացնել եւ համալրել դրանք:

Փաստաթղթերն ընդունվում են ***նոյեմբերի 10-ից մինչեւ նոյեմբերի 23-ը ներառյալ, ամեն օր՝ ժամը 10:00-ից 15:00-ը, բացի շաբաթ, կիրակի եւ այլ ոչ աշխատանքային օրերից:***

Մրցույթը տեղի կունենա ***նոյեմբերի 26-ին՝ ժամը 14:30-ին,*** Երեւանի հ. 174 հիմնական դպրոցում, հասցեն՝ ք. Երեւան, Ա-1 թաղամաս, Սվաճյան 42:

Տեղեկությունների համար զանգահարել՝ (010) 73-34-40 հեռախոսահամարով:

## Հայտարարություն

Հայտարարվում է մրցույթ՝ ՀՀ Արարատի մարզի «*Սիսի միջնակարգ դպրոց*» ՊՈԱԿ-ի ինֆորմատիկայի (7 դասաժամ), տեխնոլոգիայի (աղջիկների խումբ, 4 դասաժամ), երաժշտության (2 դասաժամ), կերպարվեստի (2 դասաժամ), հասարակագիտության (6 դասաժամ) ուսուցչի թափուր տեղերի համար:

Մրցույթն անցկացվում է երկու փուլով՝ թեստավորման եւ հարցազրույցի: Թեստավորման փուլն անցկացվում է՝ ըստ ՀՀ ԿԳՄՍՆ մշակած հարցաշարի: Հարցազրույցի փուլի հարցաշարը կազմում է հաստատությունը եւ յուրաքանչյուր մասնակցի հետ հարցազրույցն անցկացնում առանձին:

Մրցույթին մասնակցելու համար պետք է ներկայացնել՝

*- դիմում (Ձեւ 1), մեկ լուսանկար 3x4 չափի,*

*- բարձրագույն կրթությունը հավաստող փաստաթուղթ (դիպլոմ),*

*- անձը հաստատող փաստաթուղթ,*

*- «Հանրակրթության մասին» ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասին համապատասխան՝ աշխատանքային ստաժի վերաբերյալ տեղեկանք աշխատավայրից եւ աշխատանքային գրքույկի պատճենը (առկայության դեպքում),*

*- ինքնակենսագրություն (Ձեւ 5),*

*- այլ պետությունների քաղաքացիները՝ ՀՀ-ում աշխատելու իրավունքը հավաստող փաստաթուղթ,*

*- ՀՀ արական սեռի քաղաքացիները՝ նաեւ զինվորական գրքույկ,*

*- հրատարակված հոդվածների ցանկ կամ գիտական կոչումը հավաստող փաստաթղթեր (առկայության դեպքում),*

*- որակավորման տարակարգ ունենալու դեպքում՝ հավաստող փաստաթուղթ:*

Տնօրենի կողմից նշանակված պատասխանատու անձը փաստաթղթերի բնօրինակները համեմատում է պատճենների հետ եւ բնօրինակները վերադարձնում: Եթե ներկայացված փաստաթղթերի ցանկն ամբողջական չէ կամ առկա են թերություններ, մասնակիցը կարող է մինչեւ փաստաթղթերի ընդունման ժամկետի ավարտը վերացնել եւ համալրել դրանք:

Փաստաթղթերն ընդունվում են ***նոյեմբերի 10-ից մինչեւ նոյեմբերի 23-ը ներառյալ, ամեն օր՝ ժամը 10:00-ից 15:00-ը, բացի շաբաթ, կիրակի եւ այլ ոչ աշխատանքային օրերից:***

Մրցույթը տեղի կունենա ***նոյեմբերի 25-ին՝ ժամը 14:00-ին,*** ՀՀ Արարատի մարզի Սիսի միջնակարգ դպրոցում:

Տեղեկությունների համար զանգահարել՝ (093) 96-56-59 հեռախոսահամարով:

## Հայտարարություն

Հայտարարվում է մրցույթ՝ ՀՀ Սյունիքի մարզի «*Աղիտուի հիմնական դպրոց*» ՊՈԱԿ-ի ֆիզկուլտուրայի (21 դասաժամ), ֆիզիկայի (6 դասաժամ), տեխնոլոգիայի (4 դասաժամ), ՆԶՊ-ի (2 դասաժամ) ուսուցչի թափուր տեղերի համար:

Մրցույթն անցկացվում է երկու փուլով՝ թեստավորման եւ հարցազրույցի: Թեստավորման փուլն անցկացվում է՝ ըստ ՀՀ ԿԳՄՍՆ մշակած հարցաշարի: Հարցազրույցի փուլի հարցաշարը կազմում է հաստատությունը եւ յուրաքանչյուր մասնակցի հետ հարցազրույցն անցկացնում առանձին:

Մրցույթին մասնակցելու համար պետք է ներկայացնել՝

*- դիմում (Ձեւ 1), մեկ լուսանկար 3x4 չափի,*

*- բարձրագույն կրթությունը հավաստող փաստաթուղթ (դիպլոմ),*

*- անձը հաստատող փաստաթուղթ,*

*- «Հանրակրթության մասին» ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասին համապատասխան՝ աշխատանքային ստաժի վերաբերյալ տեղեկանք աշխատավայրից եւ աշխատանքային գրքույկի պատճենը (առկայության դեպքում),*

*- ինքնակենսագրություն (Ձեւ 5),*

*- այլ պետությունների քաղաքացիները՝ ՀՀ-ում աշխատելու իրավունքը հավաստող փաստաթուղթ,*

*- ՀՀ արական սեռի քաղաքացիները՝ նաեւ զինվորական գրքույկ,*

*- հրատարակված հոդվածների ցանկ կամ գիտական կոչումը հավաստող փաստաթղթեր (առկայության դեպքում),*

*- որակավորման տարակարգ ունենալու դեպքում՝ հավաստող փաստաթուղթ:*

Տնօրենի կողմից նշանակված պատասխանատու անձը փաստաթղթերի բնօրինակները համեմատում է պատճենների հետ եւ բնօրինակները վերադարձնում: Եթե ներկայացված փաստաթղթերի ցանկն ամբողջական չէ կամ առկա են թերություններ, մասնակիցը կարող է մինչեւ փաստաթղթերի ընդունման ժամկետի ավարտը վերացնել եւ համալրել դրանք:

Փաստաթղթերն ընդունվում են ***նոյեմբերի 10-ից մինչեւ նոյեմբերի 23-ը ներառյալ, ամեն օր՝ ժամը 10:00-ից 15:00-ը, բացի շաբաթ, կիրակի եւ այլ ոչ աշխատանքային օրերից:***

Մրցույթը տեղի կունենա ***նոյեմբերի 25-ին՝ ժամը 15:00-ին,*** ՀՀ Սյունիքի մարզի Աղիտուի հիմնական դպրոցում, հասցեն՝ Սիսիան համայնք, Աղիտու բնակավայր:

Տեղեկությունների համար զանգահարել՝ (093) 00-44-95 հեռախոսահամարով:

## Հայտարարություն

Հայտարարվում է մրցույթ՝ ՀՀ Գեղարքունիքի մարզի «*Սեւանի Վ. Կարապետյանի անվան հ. 3 հիմնական դպրոց*» ՊՈԱԿ-ի պատմության (18 դասաժամ) ուսուցչի թափուր տեղի համար:

